Нут (Тун – Дом)... Нут – божество природы в египетской мифологии. Имя божества Нут получается от ближневосточного чтения справа налево армянское слово Тун (Дом). Действительно, природа – дом человека.

Менес (Я первый), Менкаура (Менк Ар – Мы Арии), Аменотеп – Аменопет (Властелин всех), Рамзес – Арамзес (Я Арам – Бог всех, сын Солнца)... Фараон Аменохотеп или Аменхотеп. Последнего типа имена фараонов начинаются с армянского слова «Амена» («Всех», «Всея», «Самый»). Возможно, окончание «теп» есть армянское слово «пет» («властный», «начальник»). Ближневосточное чтение справа налево часто даёт себе знать... Фараон Гиан (Hiap – Великолепный; другое имя Гиана – Оанес, т.е. Ованес)... И целый ряд очевидно армянских имён фараонов, указывающих свою национальную принадлежность: Арамес, Армаис, Армес...

Аварис (Мой трофей), Тунис (Мой дом), Ниль (Нел – Узкая), Карнак (Каменный глаз)... Тель-эль-Амарна – деревня на Ниле, столица Египта при Аменхотепе IV (1360-1350 гг. до н.э.). «Амар» – «лето» (арм.). Амарна, вероятно, летняя резиденция фараона. Однако в первоначальной форме названия столицы вместо «Амарна» – «Арамана» («Армянская»). Есть загадочный храм Серапеум. «Серап» – «Берег любви». «Серапе» – «Есть Берег любви». Место любви. На примерах разберёмся в смысле армянского суффикса «ум». Лусавор – светлый. Лусаворум – освещение. Макур – чистый. Макурум – очищение... Серапе – Место любви. Серапеум – Место изъятия любви. Место проявления любви. Храм – место проявления любви к Богу (и друг к другу). Естественно и логично.

Одно из главных сокровенных слов египетских царей, «саркофаг», является армянским словом «саркопак» [1, с. 200-201]. «Сарк о пак» – «Готовый и закрытый» (арм.).

Армянское слово «бург» («пирамида») даёт дополнительную информацию о пирамидах. «Бур» («бурк») по-армянски: «Благоуха-

ние». «Бурел» – «благоухать». Есть армянское женское имя Бурун (Благоухающая). Пирамиды благоухали? Возможно, пирамиды помимо других, известных и неизвестных функций, выполняли также жреческие функции. А может быть слово «бурел» имело также другой, ныне утерянный смысл? Пирамиды что-то выделяли, что было приятно человеку. Не обязательно и не только запах. Возможно, звук, энергию какую-то...

Замечание 9. Слово «бурун» («благоухающий») в смысле «песчаная местность» имеется в терском диалекте русского языка. Слово «бурун» перешло в русский диалект не в исходном армянском значении, а в значении, характеризующую местность пирамид! Это могло произойти в Египте. Что это значит? Предки носителей терского диалекта когда-то находились в Египте?!

Замечание 10. Имя фараона Аменопис по-армянски буквально означает: Самый цепкий. А перевод этого слова по буквам согласно таблице Геруни означает: «Я святой, избранный всеми» [4, с. 111-112]. Это означает, во-первых, наличие демократического института избрания главы государства (типа Вече в Древней Руси), во-вторых, избранный должен обладать высокими морально-нравственными качествами. Другая форма имени фараона Аменописа тоже армянская – Аменопет [Начальник всех, т.е. Царь].

Замечание 11. Само название Египта тоже армянское. Топоним «Египет» образован из трёх слов – е, ги, пет, – которые соответственно означают: является, знание, начальник. «Египет» на древнеармянском буквально означает: «Является начальником знаний». Короче: «Владыка знаний». В армянском языке в конце топонимов и личных имён иногда прибавляется окончание «ос», первоначальная форма которого – «оц» («змея» – символ мудрости). Армянское «Египетос» («Египетоц») означало: «Мудрый Владыка знаний».

Замечание 12. Слово «саркофаг» («саркопак») позже встречаем на Руси. На саркофаге Ярослава Мудрого высечено несколько армянских букв. Общеизвестной их расшифровки нет и поныне. Эти буквы могли быть делом рук строителей саркофага. Как известно, армяне хорошие каменщики. Однако без согласия царского дома они не могли делать на саркофаге надписи. Здесь не всё ясно или всё неясно. Нас сейчас больше интересует слово «саркофаг». Естественно полагать, что армянское слово «саркопак» привезли на Русь авторы указанной армянской надписи. Видно, это слово со времён египетских саркофагов до времён русских саркофагов было в обиходе у каменщиков. Ныне выражение «сарк о пак» встречается в армянских диалектах в буквальном смысле: «готовый и закрытый».

Отметим, что в армянском языке связка «и» имеет три вида: «у», «о», «ев». В современном литературном армянском употребляются связки «у» и «ев». Связка «о» нынче употребляется в некоторых западноармянских диалектах. В слове «саркофаг» («сарк о пак») использована «устаревшая» связка «о».

Заметим, что слово «саркофаг» изначально не означало «гробница»: «саркофаг» означало «готовый и закрытый». К чему гробнице такое странное название? Во всех языках имеются односложные и точные названия – «гробница», «мавзолей», «могила»... «Саркофаг» как синоним «гробницы» – результат детского лепета, согласно которому египетские пирамиды построены для хранения мумии фараонов. В египетских пирамидах никто, никогда не находил мумий. Они присутствуют лишь в учебниках истории. Дабы построить такую машину, как пирамида Хеопса, мало одной жизни, одной страны и одной цивилизации. Тем более, цивилизации, не обладающей даже колесом. Убогий подход. Наша цивилизация не может даже понять, что такое пирамида Хеопса... Существует довольно правдоподобная и достаточно аргументированная версия, что Великая пирамида в Гизе являлась электростанцией, по крайней мере, получение экологически невинной и дешевой энергии было одной из функций пирамиды Хеопса [5, 7]. Мы лишь можем мечтать, что когда-нибудь эта древнейшая электростанция будет вновь запущена!!! И вернётся человечество на круги своя...

Люди, построившие эти грандиозные сооружения, требующие громадных затрат духовных и интеллектуальных сил высочайшего уровня и качества, не могли быть жалкими самовлюблёнными снобами, мечтающими содержать свои трупы в них. Однако оставим эти фантастически сложные пирамид-проблемы, которыми занимаются десятки тысяч исследователей и благодаря их фанатичным усилиям отсеиваются как примитивные, так и экстравагантные гипотезы и вырисовываются величественные контуры цивилизации пирамид... В рамках этой цивилизации странное для гробницы выражение «готовый и закрытый» изначально могло означать нечто совсем другое. А что?

100

Замечание 13. В Лиме (Перу) есть прямоугольные пирамиды «Арамбуру» и Маранга [3, с. 101]. «Арам бург» по-армянски: «Пирамида Арама». Видите, как пирамида «Арамзеса» («Рамзеса») почти без искажения названия «перекочевала» из Египта в Перу?

Замечание 14. Обратим внимание также на название пирамиды Маранга. Прочтём его, как принято на родине пирамид, справа налево, получим... Агнарар. Агн Арам – Огонь Арама. «Агн Арам» – армянское, арийское, индоевропейское предложение. А это показывает, чьих рук дел пирамиды Арамбуру и Маранга.

Послесловие. Власти Армении, армянские общественные организации и финансовые круги делают великое дело, как для Армении, так и для мировой цивилизации, если восстановят Карахундж, превратят его в туристический, научный и культурный центр.

Виктор ВАГАНЯН.

Литература

1. Арцруни А. Армянское нагорье и цивилизация. – М.: «Менеджер», 1999.
2. Бонвик Дж. Великая пирамида Гизы. – М.: ЦЕНТРПОЛИГРАФ, 2006.
3. Бушнелл Дж. Перу. От ранних охотников до империи инков. – М.: ЦЕНТРПОЛИГРАФ, 2003.
4. Геруни П. Армяне и Древнейшая Армения (на арм. яз.). – Ереван, «Тигран Великий», 1996.
5. Данн К. Пирамида в Гизе: усыпальница или энергостанция? – М.: «Вече», 2008.
6. Доисторическая Европа. – М.: «Вече», 2004.
7. Комиссаров В. Зов Стоунхенджа. Шифровка из космоса. – М.: «Вече», 2007.
8. Хоккинс Дж. Расшифрованный Стоунхендж. Обсерватория каменного века. – М.: ЦЕНТРПОЛИГРАФ, 2006.
9. Bochkarev N.G., Bochkarev Yu.N. Armenian Archaeoastronomical Monuments Carahunge and Metsamor, Report on international Conference on Archaeoastronomy, SEAC-10, Tartu, Estonia, Aug. 2002. in print in Journal Folklor, Tartu, 2003.

70 Регина Сафарян: «Язык – самое древнее и дорогое наследие...»

занимались виноделием. Они научили армян и свиноводству, в частности, коптить окорока так, как это делается у них на родине, в Германии. С немцами армяне дружили, учились у них – языку, поведению. Моя воспитательница в детском саду была немкой. Когда мне исполнилось 7 лет, отец решил переехать в Армению. Он очень хотел, чтобы дети жили и учились в Армении. Это было мудрое решение. И наша семья переехала в Армению, в город Раздан. С отцовской стороны дедушка и бабушка родом из Геташена (Азербайджан), но жили в Баку. В молодости дедушка профессионально играл на таре (восточный струнный музыкальный инструмент). Он был убеждённым коммунистом и по поручению партии был отправлен в город Кировабад, а после – основался в родном селе. Дедушка был образованным, интеллигентным человеком. Вся наша родня его обожала. Я помню, как красиво он одевался, помню его карманные серебряные часы на цепочке, его маленькие красные карандаши, которыми он подчеркивал интересные строки газетных статей. Дед очень любил мою бабушку, которую в Геташене все называли бакинкой, так как она отличалась от деревенских женщин. Бабушка тоже была грамотной женщиной, любила читать и на армянском, и на русском языках. Они дожили до глубокой старости и скончались в 70-ые годы. В 1991 году, во время карабахского конфликта, геташенцы до конца боролись за свое село, где веками жили их предки, но вынуждены были покинуть его. Это была большая трагедия для нашей семьи. Я часто вспоминаю Геташен, и каждый раз мое сердце сжимается от боли, что я никогда не смогу побывать на могилах моих горячо любимых дедушки с бабушкой, дяди, тети...

- Что повлияло на выбор Вами профессии филолога?

- Я училась в школе №1 им. Х. Абовяна г. Раздана. Любовь к языку и литературе у меня появилась с детства. С первого класса ходила в библиотеку, читала много, читала днем и ночью, без разбора. В седьмом классе уже прочитала все тома Бальзака, которые были переведены на армянский язык. Но в студенческие годы, конечно же, мне пришлось все заново перечитывать. Когда в районной библиотеке уже не осталось книг, начала ходить в городскую библиотеку. В детстве мечтала играть на сцене, потом хотела быть юристом. Но в старших классах я решила стать филологом. Окончила школу с отличием и поступила на филологический факультет Ереванского госуниверситета. О чём, конечно же, не жалею.

- Расскажите, как создавались курсы армянского языка при Нижегородской армянской общине, а также факультет по изучению армянского языка на факультете «Международные отношения» ННГУ?

- Армянская воскресная школа в Нижнем Новгороде действует с октября 1995 года. Я там работаю с 2003 года. Изначально вела лекторий по литературе, истории и культуре армянского народа. Со временем заметила отрицательную тенденцию: студенческая молодежь не только интересовалась историей и культурой своей исторической Родины, но у многих студентов появилось желание учить армянский язык. Было решено в воскресной школе открыть класс для студентов. Мы очень рады, что год за годом увеличивается количество учеников воскресной школы. На факультете международных отношений ННГУ им. Н. И. Лобачевского программа арменоведения реализуется почти 10 лет, а армянский язык преподается с 2003 года по инициативе Арсена Симоняна, который преподавал на этом факультете. Его предложение – изучать армянский язык – поддержало руководство факультета. Кроме преподавания языка у нас ведутся занятия по истории, культуре, литературе Армении, издаются альманахи «Наири» – первый в регионе журнал, посвященный армянской тематике. Совместно с Нижегородской армянской общиной организуем научные конференции, разные мероприятия.

- На занятиях, которые Вы проводите, царит атмосфера искренней заинтересованности и любви к армянскому языку, истории и культуре армянского народа. Что Вы вкладываете в процесс обучения? Есть ли какие-то личные профессиональные секреты?

- Особых профессиональных секретов у меня нет. Не исключаю и генетический фактор. Моя мама учитель биологии. Она преподавала более 30 лет, и ученики любили, уважали ее. Когда я решила работать в школе, мама сказала, что если я хочу стать хорошим учителем, то первое: «Должна всегда быть идеально готова к уроку, на шаг вперед предугадав вопросы учеников». Второе: «Любить всех своих учеников и каждого в отдельности». И третье: «Никогда не повышать свой голос на своих подопечных». Этим правилам я следую по сей день. Я помню, как во время моей педагогической практики в школе им. Г. Агаяна г. Еревана, после первого занятия, директор школы, которая слушала мой урок, сказала: «Я уверена, что вы дочь учителя».

- Какое количество человек за время существования курсов и факультатива научились армянскому языку? Я знаю, что среди них есть и

люди, для которых армянский не является родным. Какова специфика преподавания языка для таких слушателей?

- На факультете более 40 студентов прошли курс армянского языка. А в воскресной школе только в этом учебном году – более 30 слушателей. Среди них есть и русские, что очень приятно. Если на факультете я имею возможность отдельно работать с русскоязычной группой и с армяноязычной, то в воскресной школе у нас только одна объединённая группа. Я стараюсь вести уроки таким образом, чтобы заинтересовать всех. Это не очень сложно. Хотя у большинства студентов родной язык – русский, все пришли с большим желанием и готовностью изучать армянский. Некоторые понимают армянский язык или даже владеют им, но – на бытовом уровне. Во время практических работ мне помогают наши учителя воскресной школы.

- Язык неотделим от культуры народа. Какие проблемы и возможные пути их решения Вы видите в культурно-языковой среде Спюрка?

- Конечно, язык неотделим от культуры народа и является самым древним и дорогим наследием. Сохранить и передавать это наследие своим потомкам – святое дело каждого армянина. Для нас большая трагедия, что большая часть армян живут вне Армении. У нашего народа есть такое качество – он быстро интегрируется в культурную среду любой страны, где живет. Это, конечно, имеет свои положительные стороны, но чаще встречаются армяне, которые не говорят на своем родном языке. Это основная проблема Спюрка. Сегодня в России растет новое поколение армянских детей. Многие из них родились уже здесь, некоторые даже никогда не видели Армению, не знают родного языка. Конечно, армяне всегда стараются сохранить свои обычаи и традиции, но для сохранения национального лица важное значение имеет знание национального языка. Вот почему воскресная школа необходима. Надеемся, что скоро закончится строительство армянского храмового комплекса в Нижнем Новгороде. Церковь всегда объединяла армян. Она сохраняет самобытность и культуру народа. Активно стало нам помогать и Министерство Диаспоры Республики Армения, снабжая нашу школу всей необходимой литературой и вовлекая наших студентов в международную программу «Ари тун» (Возвращайся домой).

- Благодарю Вас.

Интервью вел Виктор КОНОПЛЕВ.
«Армяне в мире» <http://diaspora-world.info/>

ՂԱՐԱԲԱՂՈՒՄ, ԻՆՉՊԵՍ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ

Վերջերս 33 ԱԺ պատգամավորներից մեկը, մասնավոր գրույցի ժամանակ, ոգեւորությամբ, թե՛ չարախնդությամբ ասաց. «Տեսա՛ր, թե ոնց պայթեց 88-ի փուչիկը»: Ես եւ գրույցին մասնակցող գործընկերս տարակուսած նայեցինք իրար՝ չհասկանալով, թե մեր գրուցակիցը այդ ասելիս մեզ համախոհ է համարում, թե՛ առնվազն պարտված հակառակորդ: Դառն բառերը եկան-շարվեցին կոկորդիս, բայց պատգամավորը մեր՝ Մամուլի ազգային ակումբի հյուրն էր, եւ ես նրան փորձեցի պատմել Ղարաբաղի մասին, որտեղից նոր էի վերադարձել եւ ուր ավարտվել էր 33 Սփյուռքի նախարարության կազմակերպած 5-օրյա տեւողությամբ Համահայկական լրագրողական 5-րդ համաժողովը: Դարաբաղն այնքան իրական էր եւ այլ խորհրդածությունների, նաեւ՝ մտահոգությունների տեղիք էր տալիս:

Այդ իրական Ղարաբաղը արդյունք է 88-ի դարաբաղյան Շարժման, որը ձեւավորեց այն հասարակական արժեքները եւ քաղաքական սկզբունքները, որոնք դեռ ապրում են եւ կենսունակ են՝ չնայած սարկազմին ու ծանակումներին, կասկածներին ու վիատությանը, չնայած ոտնձգություններին ու հալածանքներին:

1.

«Վերադառնում ենք Ստեփանակերտ, բայց ինձ թվում է, որ ես ոչ թե վերադառնում եմ, այլ փախչում: Փախչում եմ պատերազմից, մահերից, արկերի պայթյուններից, «Աղդամի պոլկի» տղաների հրաժեշտի լուրջությունից, փախչում եմ պատերազմի փոշուց, պատերազմի օրենքներից, կեսգիշերին այրվող խոտի դեղից, որի կրակը աշխարհն է պատել»: «Պատերազմում, ինչպես պատերազմում», «Հայք», 15.10.1993 թ.

Երևանից Ստեփանակերտ ուղևորվող ավտոբուսների շարքայումը տեղափոխում է աշխարհի 26 երկրներից ժամանած շուրջ 200 լրագրողների, որոնց այդ մասն առաջին անգամ է անցնում այդ ճանապարհով: Ես Ղարաբաղ էի մեկնում չորրորդ անգամ: Վերջին անգամ՝ 1997-ի օգոստոսին էր Մամուլի ազգային ակումբի կազմավորումից երկու ամիս անց մեր առաջին ուղևորությունը Ղարաբաղ էր (դրանից հետո մեր առջև փակվեցին դրամաշնորհների բոլոր ճանապարհները, և ՀՀ-ում հավատարմագրված արևմտյան որոշ դիվանագետներ մեզ մեղադրեցին քաղաքականությամբ զբաղվելու մեջ):

Երևանից դուրս գալիս մեկուկես ժամ անց, անմիջապես կողքիդ երևում է Արարատը: Սփյուռքահայ գործընկերներս արագ-արագ լուսանկարում են: Ես չեմ լուսանկարում, պարզապես կանգնում եմ ավտոբուսի իմ նստարանի նեղիկ մասում, որ ավելի լավ տեսնեմ Արարատը: Լուսանկարների պարբերական չխկնկնոցները մեծացնում են ավտոբուսի աղմուկը: Աշնանային արևոտ ու անամպ օրվա մեջ երևացող Արարատը

չի մորմոքում սիրտս. դրա համար նա շատ էր մոտ, գեղեցիկ ու հարազատ: Երևանից հնչող դատերս հեռախոսազանգը ցրում է իմ առանց այն էլ ցաքուցրիվ մտքերը:

Մի քանի ժամ անց մեր ավտոբուսը, թվում է, կախվել է երկնքի ու երկրի միջև: Գործընկերներս մի մասը վախենում է դուրս նայել. ավտոբուսն ընթանում է Սատանայի կամրջի վրայով: Նայում են պատուհանից դուրս և հստակ տեսնում յուրաքանչյուր կետանից թեքվելիս ավտոբուսի ետևի մասը ժառմ է օդում: Բնության և մարդու արարածների այդ երկու հրաշքերը՝ Տաթևի ձորը և վանքը տեսնելու համար պիտի անցնես կյանքի ու մահվան այդ եզրագծով: (Ստեփանակերտից Գանձասար տանող ճանապարհի վերջին հատվածը նույնքան գեղեցիկ է, սակայն անհամեմատ անվտանգ: Գործընկերներիցս Հրայր Զորյանը «Արմենպրեսի» տնօրենը, փորձում է պարզել Տաթևն ու ավելի գեղեցիկ, թե Գանձասարը «Եթե ստիպված լինեիք ընտրել, ո՞րը կընտրեիք»: Մտածում եմ՝ գուցե Տաթևը, բայց հետո հրաժարվում եմ այդ մտքից. մի թե հնարավոր է ընտրել հայրենիքի և հայրենիքի միջև):

Արդեն իրիկեսունինյան հասնում ենք Ղարաբաղի սահմանին: Փորձում եմ հասկանալ, թե ի՞նչ եմ զգում սահմանը հատելիս: Պարզապես Բերձորով Ղարաբաղ ենք մտնում, ուր շարունակվում է Հայաստանը: Դիվանագիտության սառը կանոններն այս ճանապարհին չեն գործում: ԼՂՀ անկախությունը ճանաչելու կոչերն ու պահանջներն անիմաստ անօգուտ ենթվում: Դարաբաղը Հայաստանի շարունակությունն է ոչ միայն աշխարհագրորեն: Բայց և աշխարհագրորեն: Հայրենիքը կենսական տարածք է, սակայն այդ տարածքը հայրենիք է դառնում այնտեղ ապրող բնակիչներով: Հասնում ենք Ստեփանակերտ, մտնում եմ հյուրանոցի ժամանակակից և ճաշակով կահավորված իմ համարը, բացում պատուհանը: Ստեփանակերտի տները լույսերը վառվում են միմյանց ետևից: Դրսում խաղաղությունն է ու հաղթանակը՝ իրական ու շոշափելի: Եվ դրանք վիճարկելը դեմ է ոչ միայն հասարակական, տրամաբանական, այլև բնության օրենքներին:

2.

«Աղդամի պոլկի» զինվորների հետ նստած ենք սեղանի շուրջը: Այդ նրանք են լեզրել Աղդամի կրակակետերը: Ուզում եմ հաշվել, թե քանի սն են «պոլկի» տղաները, բայց խաղող պահին հրաժարվում եմ այդ մտքից, քանի որ նախապաշարվածությունը գլուխ է բարձրացնում մեջս: Հրամանատար Ռոման մի մեծ բաժակ է դնում առջևս: Ես ատում եմ աշխարհի բոլոր բաժակաձառերը, որոնք բարձրացվում են պատերազմի ու հաղթանակի մասին, բայց այդ պահին բազմաթիվ աչքեր հառնում են ինձ: Ամեն օր մահվան աչքերին նայող այս զինվորների համար ես հայտնվել եմ այն կյանքից, որը նրանց համար անորոշ ժամանակով կանգ է առել և ամեն ինչից յուրաքանչյուրի համար կարող է ավարտվել: Ես թեթևակի բարձրացնում եմ բաժակս, նրանց նայել չեմ կարողանում, ու աչքերս հառնում են երկինք: «Թող Աստված

տա, որ այս պատերազմը շուտով ավարտվի և թող բոլորը տեսնեք խաղաղությունն ու հաղթանակը»:

Հոկտեմբերի 13-ին Համահայկական լրագրողական համաժողովի մեկնարկից առաջ ծաղիկներ ենք դնում դարաբաղյան պատերազմի զոհերի շիրմաքարերին: Առաջին շաբթի բոլոր զոհերի մահվան տարեթիվը գրեթե նույնն է՝ 1994: Անցնում եմ շիրմաքարերի շաբթերի միջով: Ինքս ինձ վախենում եմ խոստովանել, որ շիրմանկարների մեջ ահով ծանոթ դեմքեր եմ փնտրում: Փնտրում եմ «Աղդամի պոլկի» տղաներին, բայց անմիջապես հասկանում եմ, որ նրանց դեմքերը չեմ հիշում: Ցավը սեղմում է կոկորդս. շիրմանկարներից ինձ են նայում 20-25 տարեկան տղաները: Նրանց դեմքերը խաղաղ են թվում, մահվան պատկերը մի պահ անհետանում է, քանի որ շիրմատան լուրջությունը խախտվել է 200 մարդ միանգամից այցելել են այստեղ: Ամաչում եմ Երևանում ժամանակ առ ժամանակ թեժացող բանավեճերից, թե ինչպես վերադարձնել ազատագրված տարածքները փաթեթային, թե՛ փուլային տարբերակով, մարդիկդ այն, թե՛ փարիզյան սկզբունքներով: Ամաչում եմ նրանց փոխարեն, ովքեր Երևանում տարին 2-3 անգամ այցելում են Եռաբլուր, սակայն հետո երկյուղում են ասել, որ ցանկացած պատերազմ լուծում է նաև վիճահարույց տարածքների հարցեր: (ԼՂՀ ԱԺ նախագահ Աշոտ Դուլյանը, արդեն հաջորդ օրը, ի պատասխան իմ հարցին, թե ո՞րն է փոխզիջումների այն սահմանը, որից այն կողմ չի անցնի Ստեփանակերտը, խորհուրդ է տալիս չխոսել փոխզիջումների մասին, քանի դեռ դրանք մասին չի խոսել Աղբյուրեջանը): Ես քմծիծաղ եմ տալիս միմյանց փոխարինող ԵԱՀԿ համանախագահների վրա, որոնք տարիներ շարունակ լուրջ և մտազբաղ դեմքերով փորձում են լուծել Ղարաբաղի խնդիրը, որն այստեղ բոլորը վաղուց լուծված են համարում: Թեպետ Ղարաբաղի պաշտպանության նախարար Մովսես Հակոբյանը մտահոգված է պատերազմը դեռ չի ավարտվել «մենք դիրքային պատերազմ» մեջ ենք: Ես ռազմական գործիչ չեմ, քաղաքական գործիչ չեմ, բայց ինձ պատերազմի սպառնալիքը չափազանցված է թվում: Մի քանի գործնական հաշվի առնելով.

- Հայաստանի և Ադրբեյջանի ներքին խարխուլ կյանքը,

- միջազգային կառույցների ու շաղկապությունը տարածաշրջանի հանդեպ,

- տարածաշրջանում հաղորդակցության ուղիների և ճանապարհների անվտանգությունը մտահոգված երկրների տնտեսական և քաղաքական շահերը,

- կողմերի միմյանց ռազմական միջոցների մասին անբավարար տեղեկատվությունը,

- ռազմական գործողություններ վերսկսվելու դեպքում դրանց աշխարհագրության ընդլայնման անթույլատրելիությունը միջազգային հանրության համար,

- ՀԱՊԿ եւ ՆԱՏՕ-ի զորքերի հնարավոր միջամտությունը և դրա անհամատեղելիությունը տարածաշրջանի երկրների շահե-

120

րին,

- պատերազմի վերսկսմամբ շահագրգիռ Ադրբեյջանի համար պատերազմի հնարավոր հետևանքների անվանախատենությունը:

Միաժամանակ, պատերազմի սպառնալիքի պարբերական հիշատակումը էապես նվազեցնում են առաջադեմ և ժողովրդավարական պետություն կայացնելու կողմերի հնարավորությունները իրավունք տալով նրանց խոչընդոտել հասարակական-քաղաքական գործընթացների աշխուժացմանը, հանդուրժել կամ խրախուսել հասարակական և պետական կյանքի արատավոր երևույթները: Համաժողովի առաջին օրը Մովսես Հակոբյանին հարցրեցի, թե երբ է ազդարարվելու պատերազմի ավարտը, ռազմական կոնկրետ գործողության, թե կոնկրետ փաստաթղթի ստորագրման հետևանքով: Նախարարի պատասխանն այս էր՝ երբ Բաքուն Ղարաբաղի հետ փաստաթուղթ կստորագրի պատերազմի ավարտի և Ղարաբաղը ճանաչելու մասին: Ես դուրս հավատ չեմ. ինչպես Երևանում երբեք չի լինի այնպիսի իշխանություն, որը կստորագրի Ղարաբաղը հանձնելու փաստաթղթի տակ, այնպես էլ Բաքվում որևէ իշխանություն փաստաթղթով չի հրաժարվի Ղարաբաղից: Ուրեմն, եթե այդպես է, եկեք օրը 24 ժամ խոսենք պատերազմի սպառնալիքից, և մոռանանք, որ այն կանխելու ճանապարհն անցնում է առողջ հասարակական հարաբերությունների, արդարության և օրինականության հաստատման, մարդու իրավունքների պաշտպանության, ազատ և արդար ընտրությունների, արտագաղթի կանխման, կենսունակ քաղաքական համակարգի կայացման միջով:

3.

«Ադրբեյջանի փողոցներում մարդու շունչ չկա, ամենուր այրված տներ են: Բոլոր տների առջև երկաթյա բարձր, գեղեցիկ դարպասներ են: Դրանցից մեկի առջև կանգ է առնում մեր մեքենան: Բացում ենք դարպասը, մտնում բակ: Տան պատերն ամբողջովին սևացած են ծխից, միայն տեղ-տեղ երևում է, որ տունը սպիտակ քարից է եղել: Դարպասները կենդանության պատրանք էին ստեղծում, մինչդեռ դրանցից այն կողմ... պատերազմ էր: Մտնում ենք պղծի, աշխարհի բոլոր մրգերը, թվում է, այստեղ են: Նստում եմ ծառի տակ, չեմ ուզում մտածել պատերազմի մասին, մանավանդ որ ուղեկիցներս ավտոժակով վայելում են մրգերը: Ոչ շատ հեռավոր արև է պայթում: Տղաներն առանց շրջվելու, անկողով ատում են մեր դիրքերից են խփում: Մի թե իսկապես հնարավոր է վարժվել պատերազմին, մի թե իսկապես միևնույն է, արկը 10 մետրի վրա է պայթում, թե 100»:

Ես մտաբերում եմ իմ առաջին ուղևորությունը պատերազմադու Ղարաբաղ 1993-ի օգոստոսին: Ադրբեյջանի ազատագրումից անմիջապես հետո: 2010 թ. հոկտեմբերին հայ լրագրողներով մեր ավտոբուսն անցնում է Մտեփանակերտից Ադրբեյջան այն նույն ճանապարհով, որով 17 տարի առաջ անցնում էր ԼՂՀ նախարարների խորհրդի «Ռաֆի» պատանհանից դուրս պարզված ավտոմատներով, ցորենի մոխրացած արտերով, ականապատված ճանապարհներով

գնում էինք Ադրբեյջանի ալրաղաց գործարան, Ադրբեյջան, որը, ինչպես Ղարաբաղցիներն էին պատմում, ծծում էր Ղարաբաղի արյունը:

«Այդուց դուրս գալիս, բախում հանկարծ նկատում եմ մետաղյա պարանին կախված մի գույգ մանկական կարմիր գուլպա: Շուրջս միայն մոխրացած ամայություն էր, իսկ այդ գուլպաները աշխարհին ու պատերազմին անհաղորդ կախված էին պարանին: Ոչ, պատերազմը չարիք է, նույնիսկ սրբազան պատերազմ է չարիք: Մեքենայում մի տեսակ կծկվում եմ: Դիմացի սարերից պայթյուններ են լսվում: Երկու ձեռքերով ամուր գրկել եմ պայուսակա, որը ուղեկիցներս լցրել են մրգով: Պայուսակս ինձ թվում է շնչող, ապրող, կենդանի էակ, և կարծում եմ, որ գրկիս ոչ թե պայուսակ է, այլ կարմիր գուլպաների տեր երեխան: Այդ պահին միայն մի բան եմ հասկանում՝ ես ուզում եմ արկերի պայթյուններից, պատերազմի արհավիրքներից հեռու տանել կարմիր գուլպաներով երեխային: Եվ կարծում չեմ, թե ինչ ազդություն ունի նա»:

Մտեփանակերտից Ադրբեյջան ճանապարհին մի հատվածում կանգ են առնում համաժողովի մասնակիցների ավտոբուսները: Չնայած «Մուտքը խստիվ արգելված է» ցուցանակին՝ ավտոբուսները մուտք են գործում N գորմանի տարածք: Մոռացած մասնագիտական գործունեությունը լրագրողներս անվերջ լուսանկարվում ենք: Ձորակոչիկները ներողամտորեն նայում են գորմանս աղմուկ-աղաղակով լցրած լրագրողներին: Փորձում եմ գրուցել, սակայն զինվորները քչախոս են: Չեմ կարողանում տարբերակել, թե չարքեզանական դիրքերը ո՞ր կողմում են: Զինվորներից մեկը հայացքով անձայն ցույց է տալիս դիմացի սարը: Փաստորեն, առաջին գծում ենք: 1993 թ. հայկական դիրքերն ու գորմանսերը բոլորովին այլ տեսք ունեին: Նույն հողն է, նույն տարածքը, բայց 93-ին այն պատերազմական տարածք էր, այժմ՝ խաղաղության: Թեպետ պատերազմի նպատակն էլ, ի վերջո, խաղաղությունն է:

«Հանկարծ չորս հարազատ դեմքեր շրջվում են դեպի ինձ: «Մենք մեղավոր չենք, մենք չենք սկսել այս պատերազմը», - Շուրիկն է, թեպետ ես ոչ մի բառ չեմ արտաբերել: «Մենք ուզում ենք, որ մեր երեխաները ապրեն մեր հողում»: «Մենք իսկապես մեղավոր չենք, - Կոլյան է, - մենք Մուսգայիթը չենք կարող մոռանալ, մենք Մարտիկերտ ենք տեսել: Եթե դու տեսնեիր, թե ինչպես էին խաշում մեր երեխաներին, ողջ-ողջ թաղում նրանց...»: Ես նայում եմ չորս տղամարդկանց խանձված, արևահար դեմքերին, որոնք չգիտես ինչու, մի տեսակ խեղճացած են թվում: Ես հասկանում եմ, որ նրանց գտած ճշմարտությունը անհասանելի է ինձ, քանի որ այն թրծվել է 70 տարի շարունակ...»:

Ադրբեյջան բնակեցված չէ: Այժմ էլ նրա միայն երեսուն տոկոսն է ականազերծված: Տեղ-տեղ երևացող նռնենիները մի տեսակ լքված են թվում: Ղարաբաղի վերաբնակեցման խնդիրն ավելի քան հրատապ է: Երևանում անվերջ մտահոգվում են, որ այս տարածքներում դիտարկում անցկացնող միջազգային կառույցները Ղարաբաղին չմեղադրեն այդ տարածքները վերաբնակեցնելու մեջ: Վաղուց արդեն ժամանակն է թոթափել այս կեղծ, արհեստական մտահոգությունը և կենդանություն հաղորդել ազատագրված բոլոր տարածքներին: Այս գործելակերպը

բնավ էլ պատերազմ չէ միջազգային հանրության դեմ, այլ խաղաղության ձգտման լավագույն ապացույց: Այդ տարածքները պահպանելու, շենսցնելու ճանապարհը դրանց վերաբնակեցումն է: ԼՂՀ ԱԾ փոխնախագահ Արթուր Թովմասյանը սկզբունքորեն համաձայն է իմ այդ դիտարկմանը, սակայն թվարկում է դրա խոչընդոտները: «Չեն գալիս, Հայաստանից չեն գալիս այստեղ ապրելու»: «Դուք էլ թույլ չտայիք Ղարաբաղից գալիս Երևան»: Թովմասյանն ակնարկապես հասկանում է «Երկու-երեք մարդ են եկել»: «Այո, բայց քաղաքական և ռազմական իշխանությունն է եկել»: Իսկ դա նշանակում է փոխել գետի հունը անցանկալի ուղղությամբ:

4.

«Հետո վեր ենք կենում: Նրանք, ովքեր պիտի գնան, գնում են, ովքեր պիտի մնան, մնում են: Ես նայում եմ նրանց դեմքերին, որոնք անչափ ծեր են թվում, նույնիսկ 20-ամյա Դավթի դեմքն է ծերացած թվում: Նրանք պատմում էին պատերազմի մասին, հաղթանակների, պարտությունների, իրենց փոքրիկ ուրախությունների մասին: Ու նրանցից և ոչ մեկը իրեն հերոս չէր համարում, հերոս չէր էլ զգում: Նրանց համար այս կոիվը պարտք էր, Ղարաբաղցու, հայ մարդու պարտքը իր հողին, իր տանը, իր ժողովրդին, իր գոհված ընկերներին: Նրանց կոիվը սրբազան էր, ու նրանք պիտի ավարտին հասցնեին այս պատերազմը, քանի որ խաղաղությունը նրանք ինձից հազարապատիկ ավելի էին ցանկանում: Նրանք հերոսներ չէին, որովհետև «հերոս» ու «հերոսություն» բառերը չեն կարող ամփոփել այն ամենը, ինչը ապրում և ինչի համար պայքարում էին «Ադրբեյջանի պոլի» տղաները: Նրանք այլևս ֆիդայիներ չէին, այլ զինվորներ էին, պատերազմող հայ զինվորներ»:

Ղարաբաղում ես չհաղիպեցի այն բացասական վերաբերմունքին, որ սովորաբար Երևանում լսում ենք, թե հայաստանցիներին վատ են վերաբերվում: Ընդհակառակը: Հարգալից և բարյացակամ էին, և ոչ միայն պաշտոնական Ստեփանակերտը: Ինչ վերաբերում է ստեփանակերտցիների խնդիրներին, ապա նրանց հիմնականում մտահոգում է գործազրկությունը: Մի հակիրճ, բայց խիստ դիտարկում էլ լսեցի համաժողովի ընթացքում. Ղարաբաղյան Խ/կներից մեկի երիտասարդ ներկայացուցիչը, քննարկման ընթացքում, ի պատասխան անվերջ հնչող դիտարկումներին, թե պետք է միավորել ուժերը տեղեկատվական ճակատում արտաքին թշնամու դեմ պայքարում, նկատեց իսկ ո՞վ է պայքարելու ներքին թշնամու դեմ, անարդարության, սոցիալական բևեռացման, կոռուպցիայի. այդ թշնամին պակաս վտանգավոր չէ: Երիտասարդի ճիշդ շատ էր անկեղծ, որպեսզի չհավատայի նրան: Ղարաբաղում, ինչպես Հայաստանում:

Սակայն սրանից ոչ պակաս մեկ այլ մտահոգիչ երևույթի մասին: Երևանում ԼՂՀ անկախության միջազգային ճանաչման անհրաժեշտության մասին խոսում են մի շարք պատճառներով.

- դա անում են միջազգային հանրության համար,

130

- համոզված են, որ Ղարաբաղի ինքնուրույն անկախությունն է,
 - ձգտում են, որ Ղարաբաղը դառնա բանակցային կողմ,
 - վստահ են, որ Ղարաբաղի անվտանգությունը նրա անկախության ճանաչումն է,
 - քաղաքական պարզամտության և սխալ հաշվարկների հետևանքով,
 - ինչպես ղեկավար, որ պաշտոնական Երևանին Ղարաբաղը չի հուզում,
 - վստահ են, որ Ղարաբաղը չի միանա Հայաստանին:

Մինչև Ղարաբաղ մեկնելը այս վերջին պատճառն ամենամոտեմբերականն էր և անհեթեթ էր թվում: Պաշտոնական Ստեփանակերտի հետ հանդիպումներում զգում էի, որ այդ պատճառը բնավ էլ անհավանական չէ: ԼՂՀ ԱԺ դաշինքում ԱԺ նախագահ Աշոտ Դուլյանի, փոխնախագահ Արթուր Թովմասյանի և խմբակցությունների ղեկավարների հետ հանդիպման ընթացքում հասկացա, որ պաշտոնական Ստեփանակերտը վերանայում է Հայաստանին միանալու իր մոտեցումները: Աշոտ Դուլյանն այդ հանդիպմանը սկզբում այնքան խոսեց ԼՂՀ անկախության ճանաչման մասին, որ նրան հարցրեցի արդյո՞ք Ղարաբաղի քաղաքական իշխանությունը վերանայել է Հայաստանի հետ վերամիավորվելու իր մոտեցումը: Ես հատուկ ընդգծեցի «քաղաքական իշխանությունը», քանի որ այն կարծիքին չեմ, որ հասարակությունն էլ է նույնն ուզում:

Պաշտոնական Ստեփանակերտն իրական իշխանությունն է ուզում, և այն չի ուզում կիսել Երևանի հետ: Ղարաբաղն իշխանության մարմիններ ունի՝ նախագահ, խորհրդարան, կառավարություն, դատարաններ: Եվ թե՛ պետ Դուլյանը պատամիտանելիս նշեց, որ այդ հարցը իրեն շատ են տալիս ուսանողները, սակայն ակնհայտ էր, որ հարցս նրան հանկարծակիի բերեց: Նա վերհիշեց, թե ինչպես առաջացավ «Միացում» կարգախոսը, հիշեց ՀԽՍՀ ԳԽ դեկտեմբերի 1-ի որոշումը, Ղարաբաղի անկախության հանրաքվեն, և Ղարաբաղի անկախության ձգտումը պատճառաբանեց միջազգային կառույցներում հայկական պատվիրականության երկու ձայնի առավելությամբ, և վերջում ասաց, եթե իրավիճակը թելադրի, այլ Հայաստանի հետ վերամիավորվելու որոշում կընդունեն:

Եթե Ղարաբաղի Հայաստանին վերամիավորվելու մասին Ստեփանակերտում առանձնապես չեն ուզում հիշել, ապա այդ դեպքում ինչն առաջ Հայաստանին Ռոբերտ Քոչարյանն ու Սերժ Սարգսյանը: Հայաստանը պետք է Ղարաբաղին նույնքան, որքան Ղարաբաղը Հայաստանին: Դրանք նույն օրգանիզմի մասերն են՝ ապրող, շնչող, կենդանի: Մնացածը քաղաքական սեթենյանքներն են՝ գործողությունների, ընտրական քվեների, քաղաքական ազդեցության և իշխանության համար: Վկան Երևան-Ստեփանակերտ ճանապարհը, որը շուրջ ութսու տոկոսով իշխանությանն է պատկանում, այլ հանգիստ և վստահություն: Այն, ինչ

միավորել են «Աղդամի պոլկի» տղաները, չի կարող բաժանել իշխանությունը: Այն, ինչ միավորել է ժողովուրդը, չեն կարող բաժանել իշխանությունները: Այն, ինչ միավորել են ժողովուրդը և իշխանությունը, չի կարող բաժանել աշխարհը:

Երևան վերադարձի ճանապարհին, Գորիսում համաժողովի մասնակիցները, ըստ ծրագրի, պետք է հանդիպեին Սերժ Սարգսյանի հետ: Հանդիպումից առաջ տեղեկանում ենք՝ նա միայն սփյուռքահայ լրագրողների հետ է հանդիպելու: Ցուցակով: Սակայն ցուցակում նաև հայաստանցիների ազգանուններ կան: Չկան Սյունիքի մարզի տեղական ՁԼՄ-ների անունները, որոնց ղեկավարները ևս մասնակցում էին համաժողովին: Չկան համաժողովը լուսաբանող լրագրողների ազգանունները, որոնք մի քանի օր շարունակ, երբ մենք վայելում էինք չլուսաբանված մեր ազատությունը, նրանք փորձում էին ապահովել լրատվությունը համաժողովից: Իմ ազգանունն էլ չկար, թեպետ ես համաժողովին հրավիրված էի որպես մասնակից՝ ելույթի առաջարկով: Փաստորեն՝ հարցադրումս ձախողվեց: Սակայն ամենակարևորը՝ համաժողովի նպատակը Հայաստանի և Սփյուռքի լրագրողական միասնականության պապահովումը, լրագրողներին բաժանելիս՝ հոգս ցնդեց: Միասնականության ապահովումը նույնքան անարժեք էր, որքան անցանկալի էր անկանխատեսելիությունը: Պաշտոնական Երևանը դարձյալ ամեն ինչ փչացրեց:

Նարինե ՄԿՐՏՅԱՆ

Լրագրողների համահայկական 5-րդ համագումարը. մի քանի դիտարկում

Հայ ընթերցողն արդեն տեղյակ է, որ ս.թ. հոկտեմբերի 13-16-ը Ստեփանակերտի մշակույթի և երիտասարդության պալատում տեղի է ունեցել Լրագրողների համահայկական 5-րդ համաժողովը: Կազմակերպիչը ՀՀ սփյուռքի նախարարությունն էր, որին աջակցում էին Հայաստանի ժողովրդաստեղծության միությունը, «Մեկ ազգ, մեկ մշակույթ» հիմնադրամը, Լրատվամիջոցների համահայկական ընկերակցությունը: Համաժողովն ուներ «21-րդ դարի մարտահրավերները, տեղեկատվական անվտանգությունը և հայ լրագրությունը» խորագիրը: Համաժողովին մասնակցում էր շուրջ 200 լրագրող՝ աշխարհի 26 երկրներից: Համաժողովին մասնակցում էր նաև «Սյունյաց երկրի» ներկայացուցիչը:

Համաժողովի մասին առաջին իսկ օրվանից բազմաթիվ հրապարակումներ են լույս աշխարհ եկել: Եվ, կարելի է ասել, այն լուսաբանվել է ըստ արժանվույնի, ինչի համար և չենք անդրադառնում նրա ընթացքին: Այդ բոլորով հանդերձ, սակայն, մի շարք հարցեր միանշանակ



Համաժողովի բացումը, ձախից՝ սփյուռքի նախարար Գրանուշ Զակոբյան, ԼՂՀ նախագահ Բակո Սահակյան, Արցախի թեմի առաջնորդ Պարգև Սրբազան

չընդունվեցին մասնակիցների կողմից և շարունակում են քննարկման առարկա ծալ առայսօր: Այդ հարցերի շուրջ էլ, ահա, ներկայացնում ենք մեր դիտարկումները:

Նախ անկեղծ մթնոլորտ, կարծեք, այդպես էլ չատեղծվեց համաժողովում: Ավելի շատ իշխում էր պաշտոնական, իշխանական հայտնի գաղափարների խիտ մառախուղը, ինչն էլ, բնականաբար, Էսկան անդրադարձ ունեցավ ելույթների ռզու և բովանդակության վրա (նման ելույթներին մեզանում հիմա կպցնում են «կառուցողական» հորջորջումը):

Վստահ ենք, մինչդեռ, անկեղծության պարագայում ավելի հիմնովին և ամբողջական կներկայացվեին հայ լրագրության հիմնահարցերը, հռչակված կարգախոսից բխող խնդիրները:

Երկրորդ. Սփյուռքում հայապահպանության հույժ կարևոր

հարցը տեղ էր գտել ելույթների մեծ մասում: Բայց որևէ անդրադարձելով Սփյուռքին առնչվող գլխավոր հարցերից մեկին՝ այն իրողությանը, որ Սփյուռքն այսօր մեծ թափով համալրվում է Հայաստանից հեռացողների հաշվին (անգամ պետական վիճակագրությունն է այդ մասին ճշում): Ուրեմն, ողջամիտ կլինեք, եթե Սփյուռքի մասին խոսելիս տարանջատեինք պատմականորեն ձևավորված Սփյուռքը, որի ներսում հայապահպանության խնդիրն իրոք վտանգված է: Միանգամայն այլ խոսակցություն էր ենթադրում Սփյուռքի մյուս հատվածը, որը ձևավորվել և օրավուր ընդլայնվում է երկրից օտարվողների հաշվին: Կարծում ենք, որ պետք է (առնվազն) ուսումնասիրել արտագաղթի պատճառները (եթե իշխանություններն ու լրատվամիջոցները չգիտեն) և դրանց վերացումը դնել պետական քաղաքականության հիմքում: Այլապես մեր մտահոգությունը Սփյուռքի կացության հանդեպ անկեղծ չի

145

կարող համարվել: Համոզված ենք նաև, որ արտագաղթի պատճառների վերացումը թույլ կտա ոչ միայն նվազեցնել դրա տեմպերը, այլև վերադարձի ճանապարհ բացել վերջին տարիներին երկրից հեռացած և օտար ափերին դեռևս չինտեգրված մեր հայրենակիցների համար:



Հակառակ դեպքում ծիծաղելի կդառնա (եթե արդեն ծիծաղելի չէ) հեռուստաթերից անդադար հնչող «Արի տուն» կոչ-հորդորը:

Երրորդ. այդպես էլ չիմացանք, թե ինչու ընդդիմադիր համարվող մայրաքաղաքային առաջատար թերթերի ներկայացուցիչները չեն մասնակցում համաժողովին (հրավիրվել ու չեն եկել, թե չեն հրավիրվել): Շատ քիչ էին առաջատար հեռուստալրատվամիջոցների ներկայացուցիչները (սովորաբար նրանք արժանապատվությունից ցածր են համարում լրագրողական նման միջոցառումներին մասնակցելը): Զարմանալի էր Երևանի մամուլի ակումբի պահվածքը: Համաժողովի երկրորդ և երրորդ օրերին (հոկտեմբերի 14-15-ին) ակումբի ներկայացուցիչները եկել էին Սյունիք և եղած-չեղած մի քանի լրագրողի հետ սեմինար էին անցկացնում: Չենք ուզում վիճարկել այդ սեմինարի անհրաժեշտությունն ու կարևորությունը, բայց կարելի էր չէ՝ սեմինարը հետաձգել և մասնակցել լրագրողների համաժողովին:

Լրագրողական մեր համքարության պառակտվածությունը, մի խոսքով, նոր ուժով դրսևորվեց համաժողովում:

Չորրորդ. բոլորս միասին և համերաշխ շրջանցեցինք 2008-ի Մարտի 1-ից հետո հայաստանյան լրատվամիջոցների շուրջ ստեղծված վիճակը: Քանի-քանի լրագրողներ այդ ընթացքում ենթարկվեցին ոստիկանների հակասահմանադրական ու հակապետական մեքենայություններին, քանի-քանի լրագրողների արժանապատվություն տրորվեց: Հայ ժողովրդի, միջազգային կազմակերպությունների որոշակի մասի խորին համոզմամբ Հայաստանում վերջին տարիներին ունեցել ենք և ունենք քաղաքանախարհային լրագրող, բնականաբար համաժողովականներ, չհամարձակվեցինք ծալուռն հանել ցավալի այդ իրողությունների առնչությամբ:

Հինգերորդ. մենք գրեթե չքննարկեցինք լրատվական աշխարհի առջև ծառացած թիվ մեկ խնդրի՝ խոսքի ազատության իրական հնարավորությունների մասին հարցը: Թե ազատ խոսքն ինչ սահմաններ ունի համաժողովին մասնակցած 26 երկրներում, չենք կարող ասել: Բայց հո գիտենք, թե ինչ արժե ազատ խոսքը մեր հանրապետությունում, թե ազատ խոսքի

երկրի առջև, որոնց շուրջ պիտի համախմբվենք և աշխատենք: Համազգային այդ խնդիրներն են՝ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի արդար լուծում, Ցեղասպանության ճանաչում, Հայաստանի Հանրապետության և Արցախի հզորացում ու զարգացում, մայրենի լեզվի, մշակույթի պահպանում և համախմբում Հայ առաքելական եկեղեցու շուրջ: Նախ՝ շատ վատ

քի մասին ինչ պատկերացումներ կան վերստին: Իսկ դա հարցերի հարցն է, եթե ուզում ենք իսկապես կրել լրագրողի, լրատվամիջոցի ծանր և պատասխանատու խաչը: Ի՞նչ մեկնաբանություն կարող է ունենալ, օրինակ, իրողությունը, որ եվրոպական կառույցներին ինտեգրվող և 21-րդ դարում ապրող մի ամբողջ երկրում գոնե մեկ ազատ, անկախ, այլընտրանքային հեռուստալրատվամիջոց չունենք:

Վեցերորդ. բազմաթիվ ելույթներում (նաև իշխանական թևի ներկայացուցիչների) խոստովանություն լսեցինք՝ մենք առաջմ պարտվում ենք հայ-ադրբեջանական, հայ-թուրքական լրատվական պատերազմում:

Է ու անբնական, որ մեր համազգային խնդիրներն ազգովի չենք որոշարկել, որ դրանք համազգային են միայն նախարարի (թեկուզև իշխող խմբավորման) պատկերացմամբ: Այնուհետև, վիճարկելի է նշված խնդիրների համազգային լինելը մեր ընթացքի այս փուլում: Փոխարենը, համոզված ենք, պետք է կենտրոնանալ մեկ գերխնդրի վրա՝ Հայոց անկախ պետության կառուցում՝ իրավական, սոցիալական կողմնորոշմամբ, քաղաքացիական հասարակությամբ ու գործող սահմանադրությամբ: Սույն գերխնդիրը լուծելու դեպքում մյուս բոլոր խնդիրները կլուծվեն:



Բայց վախեցանք ճշտել՝ ինչո՞ւ ենք պարտվում, մանավանդ որ լրագրողական աշխարհը չէ այդ պարտությունների մեղավորը:

Յոթերորդ. ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը թվարկեց այն չորս-հինգ (իր պատկերացմամբ) համազգային խնդիրները, որոնք ծառացած են ազգի,

Ութերորդ. երկիրը, հասարակությունը սպասում են լրագրողական ճշմարիտ խոսքի (ոչ քարոզի, ոչ պրոպագանդայի). համենայնդեպս նման տպավորություն ստացանք համաժողովում հնչած որոշ ելույթներից: Բայց այդ սպասելիքն էլ

150

բազում պատճառներով չի կարող կյանքի կոչվել այսօր:

Հեռուստատեսության ընթացքում հայաստանյան լրագրողներին մեկը հարց ուղղեց 'Կալիֆորնիայից մեզ հետ զրուցող խմբագրապետերին՝ ի նշ ազդեցություն ունեն ամերիկահայ լրատվամիջոցներն ԱՄՆ քաղաքականության վրա: Իսկ մե նք... Մենք մեզ չհարցրինք՝ կարողանո՞ւմ ենք ազդեցություն ունենալ Հայաստանի քաղաքականության վրա:

Իններորդ. Արցախի լրատվամիջոցների ներկայացուցիչները չերևացին համաժողովում: Եթե անգամ դահլիճում էին, ապա չսովեց նրանց ձայնը: Փոխարենն այնտեղ էին արցախյան գրեթե բոլոր գերատեսչությունների մամուլ քարտուղարները: Հիշո՞ւ եր, ըստ էության, ելույթներից մեկում հնչած դիտարկումն արցախյան լրատվամիջոցների չկայացածության մասին, որը, հասկանալիորեն, հիվանդագին ընդունվեց տեղական նշանակության որոշ գործիչների կողմից:

Տասներորդ. մեզանում առկա մի իրողություն (տխուր, ավելի ճիշտ՝ ծիծաղելի) նորովի և ավելի ցցուն դրսևորվեց համաժողովի օրերին: Դա լրագրողներին, լրատվամիջոցներին ըստ կարևորության (ընտրյալների և ոչ ընտրյալների) բաժանելու մանրությունն է: Այսպես՝ ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը Ստեփանակերտում ընդունեց միայն Սփյուռքի լրագրողներին և հայաստանցի «ընտրյալներին»: Մերժ Սարգսյանն էլ նույն ձևաչափով Գորիսում ընդունեց համաժողովի մասնակիցներին: Սկզբում ասացին, թե դահլիճը փոքր է, հետո պարզվեց, որ հանդիպման վայրը թատրոնի դահլիճն է, որի 500 տեղից 30-40-ն է միայն զբաղեցվել (Սփյուռքի որոշ լրագրողներ վիրավորվել էին նման խտրական մոտեցումից և հրաժարվել մասնակցել Մերժ Սարգսյանի հանդիպմանը): Ի դեպ, այդ սկզբունքով էին երկրի ղեկավարներն ընդունել Համահայկական լրատվամիջոցների ղեկավարների համաժողովի մասնակիցներին (17-22 սեպտեմբերի 2008 թ.): Այդ սկզբունքով էլ մայրաքաղաքային բոլոր միջոցառումներն են կազմակերպվում, ինչը, անկեղծ լինենք, բացառապես քննադատի տեղիք է տալիս: Այդ սկզբունքով էլ համաժողովում ինչ-որ հանձնաժողովներ ձևավորվեցին:

Տասներորդ. որերորդ անգամ լրագրողների համաժողովին չհետաքրքրեց սկզբունքային մի հարց



և՛ լրատվամիջոցների պահպանման, գոյապահպանման գերիսնդիրը, ինչից ուղղակիորեն կախված են ազատ խոսքն ու անկաշկանդ գործունեությունը: Շատ վաղուց պարզաբանման կարիք ունի լրատվամիջոցներին հատկացվող պետական սուբսիդիաների բաժանման սկզբունքը: Շատ վաղուց պարզաբանման կարոտ է հարցը, թե ինչու որոշ գովազդների հրապարակումը կառավարության կողմից վերապահվել է կոնկրետ լրատվամիջոցների: Պարզաբանման կարոտ է հարցը, թե ինչպես է ստացվում, որ լրատվությանն առնչվող դրամաշնորհները մեծ մասամբ տրվում են նույն լրատվամիջոցներին կամ լրատվամիջոցների կցակառույց դարձած լրագրողական (մամուլի) ինչ-որ ակումբներին:

Ամփոփենք խոսքը: Լրագրողների համահայկական 5-րդ համաժողովը, ցավոք, չլուծեց իր առջև ծառացած խնդիրները: Երիցս հաստատվեց պարզագույն ճշմարտությունը, որ լրագրողների համաժողովն այն միջոցառումն է, որ կարող է անցկացվել պետական որևէ գերատեսչության կողմից: Լրագրողների համահայկական համաժողովը պետք է կազմակերպվի միանգամայն այլ սկզբունքով:

Մեկ հարց ևս, որ հավանաբար ինձ կուղղեն իմ գործընկերները՝ իսկ ինչո՞ւ այդ ամենը չինչեցրիք համաժողովում: Միանգամայն արդարացի այդ հարցն իր պատասխանն ունի: Լրագրողների համահայկական համաժողովը մեր պատկերացմամբ այն իրադարձությունն է, որի ընթացքում քննարկված հարցերի մասին կարելի է խոսել նաև համաժողովի աշխատանքների ավարտից հետո, քանի որ լրագրության հիմնահարցերի արծարծումը չի կարող սկսվել և ավարտվել մեկ համաժողովով:

Սամվել ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Ստեփանակերտում կայացավ «Հայապահպանության գործում ունեցած նշանակալի ավանդի համար» համահայկական մրցանակաբաշխություն «Լավագույն հայկական լրատվամիջոց» անվանակարգում

Հոկտեմբերի 15-ին Ստեփանակերտում հայ լրագրողների 5-րդ համաժողովի փակման հանդիսության ընթացքում կայացավ ՀՀ սփյուռքի նախարարության և Համաշխարհային հայկական կոնգրեսի կազմակերպած «Հայապահպանության գործում ունեցած նշանակալի ավանդի համար» համահայկական ամենամյա մրցանակաբաշխությունը «Լավագույն հայկական լրատվամիջոց» անվանակարգում:

Մրցանակաբաշխության հանդիսավոր արարողությանը ներկա էին ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը, Համաշխարհային հայկական կոնգրեսի (ՀՀԿ) նախագահ Արա Աբրահամյանը, ՀՀԿ նախագահի առաջին տեղակալ Արամ Աբրահամյանը, Հայ լրագրողների 5-րդ համաժողովի մասնակիցները և հյուրեր:

«Լավագույն հայկական լրատվամիջոց» անվանակարգի տպագիր լրատվամիջոց (օրաթերթ, շաբաթաթերթ) ենթաանվանակարգում գլխավոր մրցանակ շնորհվեց «Ազդակ» օրաթերթին (Լիբանան, Բեյրութ): Այս ենթաանվանակարգում մրցանակակիրներ դարձան «Ժամանակ» օրաթերթը (Թուրքիա, Ստամբուլ), «Հորիզոն» շաբաթաթերթը (Կանադա, Մոնրեալ), «Ազատ օր» օրաթերթը (Հունաստան, Աթենք) և «Ալիք» օրաթերթը (Իրան, Թեհրան):

«Լավագույն հայկական լրատվամիջոց» անվանակարգի տպագիր լրատվամիջոց (ամսագիր, ամսաթերթ, պարբերական, հանդես) ենթաանվանակարգում գլխավոր մրցանակ

160

ստացավ «Համայնապատկեր» գրական մշակութային հանդեսը (ԱՄՆ, Գլենդեյլ): Այս ենթաանվանակարգում մրցանակակիրներ դարձան «Անիվ» ամսագիրը (ՌԴ, Մոսկվա), «Օրեր» ամսագիրը (Չեխիա, Պրահա) և «Գործարար» ամսագիրը (ՌԴ, Կալուգա):

«Լավագույն հայկական լրատվամիջոց» անվանակարգի ինտերնետային լրատվամիջոց ենթաանվանակարգում գլխավոր մրցանակ շնորհվեց «Անալիտիկա» կայքէջին (Ուկրաինա, Կիև): Այս ենթաանվանակարգում մրցանակակիրներ դարձան «Կիպրահայեր» կայքէջը (Կիպրոս, Նիկոսիա) և «Քոլեքթիվ Վան» կայքէջը (Ֆրանսիա, Իսի Լե Մուլին):

«Լավագույն հայկական լրատվամիջոց» անվանակարգի ռադիոէթեր ենթաանվանակարգում գլխավոր մրցանակ շնորհվեց «Վանայ ձայն» ռադիոյին (Լիբանան, Բեյրութ): Այս ենթաանվանակարգում մրցանակակիրներ դարձան «Կոմիտաս» ռադիոժամանակ (Ուրուգվայ, Մոնտեվիդեո), «Ռադիո Արմենի»-ն (Ֆրանսիա, Լիոն) և «Բոստոնի հայկական անկախ ձայնափյուն» ռադիոժամանակ (ԱՄՆ, Ուոթերթաուն):

«Լավագույն հայկական լրատվամիջոց» անվանակարգի հեռուստատեսություն ենթաանվանակարգում գլխավոր մրցանակ շնորհվեց «ԷյԱրթիԷՆ-Շանթ» հեռուստատեսությանը (ԱՄՆ, Գլենդեյլ): Այս ենթաանվանակարգում մրցանակակիրներ դարձան Վրաստանի հանրային հեռուստատեսության «Մոսմբե» լրատվական ծրագրի հայերեն ծրագիրը (Վրաստան, Թբիլիսի), «Կարկաչ» հեռուստատեսությունը (ԱՄՆ, Վալենսիա) և «Էքսպրես



TV» հեռուստաընկերությունը (ԱՄՆ, Գլենդեյլ):

Հայաստան համահայկական հիմնադրամի սահմանած խրախուսական մրցանակին արժանացան «Արևիկ» ամսագիրը (Վրաստան, Թբիլիսի), «Ազատ հայ» կայքը (ԱՄՆ, Դուբայ), «Հայրենիք» շաբաթաթերթը (Իսպանիա, Միլադա), «Ուրարտու» ամսագիրը (ՌԴ, Օմսկ):

«Խաչքար» ամսագիրը (ՌԴ, Կրասնոդար) արժանացավ «Հայաստանի Հանրապետության» խմբագրության խրախուսական մրցանակին:

ՀՀ կենտրոնական բանկի սահմանած խրախուսական մրցանակներ հանձնվեցին «Լա Նորա Արմենիա» ռադիոժամանակին (Արգենտինա, Բուենոս Այրես) և «Ռադիո Սևան»-ին (Լիբանան, Բեյրութ):

Երևանի պետական համալսարանի սահմանած խրախուսական մրցանակը շնորհվեց «Օստրովոկ Նաիրի» պարբերականին (ՌԴ, Սմոլենսկ):

«Նաիրի վ Կալինինգրադե» ամսագիրը (ՌԴ) ստացավ Հայաստանի ժուռնալիստների միության խրախուսական մրցանակը:


Այս տարի հոկտեմբերի 10-ին մշակվեց քաղաքամայր Երևանի 2792-ամյակը: Ընթերցողների ուշադրությանը ենթարկվեցին հետաքրքիր դեպքեր ու իրադարձություններ մեր մայրաքաղաքի պատմությունից:

Երևանի մասին առաջին գրավոր հիշատակությունը համարվում է Արգիշտի 1-ին թագավորի թողած արձանագրությունը Ք.ա. 782 թ. Երեբունի ամրոցի կառուցման մասին:

Հայ պատմագիրների կողմից Երևանն առաջին անգամ հիշատակվում է 5-րդ դարում: Այդ ժամանակաշրջանին պատկանող մի հիշատակարանում գրված է, որ Սոփես Խորենացին և Դավիթ Անհաղթը, տեսնելով իրենց երկրի ավերումը պարսից Հազկերտ արքայի կողմից, մեծ վիշտ են ապրում և փորձում են մեկուսանալ, իսկ «Դավիթը, Մամբրեն, Պողոսը և Աբրահամը Մովսեսի ընկերները, մնացին Երևանում»:

Երևանի առաջին եկեղեցին համարվում է Պողոս-Պետրոսը, որը կառուցվել է 5-6 դդ., քաղաքի կենտրոնում (այժմ կինոթատրոն Մուսկվայի տեղում): 1679 թ. Երևանի ավերիչ երկրաշարժի ժամանակ քանդվել, ապա վերակառուցվել է հին օրինակով: Հիմնովին քանդվել է 1931 թ.: Եկեղեցու հարուստ որմնակարները շերտ առ շերտ հանվել են և հանձնվել քաղաքի թանգարաններին: Մեկ որմնակար, ծաղկագույնի և Պողոս առաքյալի դիմանկարը պահվում են Երևան քաղաքի պատմության թանգարանում: Այստեղ է պահվում նաև եկեղեցու դուռը, որը բերվել է հին Բայազետից: 1835 թ. բայազետցի Մուխի Սաքուն բերդի դուռը բերել է Երևան, իսկ Երևանցի տեր Վարդանը գնել է նվիրել է Պողոս-Պետրոս եկեղեցուն:

Արաբներն առաջին անգամ արշավեցին Երևան



նի վրա 640 թ.:

15-րդ դարի սկզբին Երևանն առաջին անգամ դառնում է վարչական կենտրոն: Կարա-կոյուն-լու Ջիանշահը (1437-1467 թթ.) իր նվաճած Արարատյան աշխարհի մեծագույն մասը միավորում է կուսակալության մեջ, որի կենտրոնն է դառնում Երևանը: Կուսակալ է նշանակվում Յաղուբ բեկը:

1502 թ. Երևանն առաջին անգամ դառնում է պարսից սարդարի նստավայրը, այնուհետև մինչև 1639 թ. քաղաքը և նրա բերդը 14 անգամ ձեռքից ձեռք են անցնում (պարսիկների և թուրքերի): 1639-1827 թթ. քաղաքը մնում է պարսիկների ձեռքին:

1632 թ. առաջին անգամ Երևան այցելած Ֆրանսիացի ճանապարհորդ Ժան Բատիստ Տավերնիեն իր ճամփորդական նոթերում նկարագրում է կազմում է Երևանի հատակագիծը, որը պահվում է Երևանի պատմության թանգարանում:

1652-53 թթ. Երևանի խմելու սուղ ջրի հարցը առաջինը փորձում է լուծել մեծահարուստ Խոջա Գրիգորը Մոծակ մակառնումով: Նրա միջոցներով Գետառից ջուր է բերվում Կաթողիկե եկեղեցու բակը, որից օգտվում են նաև շրջակա թաղերը:

1804 թ. հուլիսին ռուսական զորքերը գնդերալ

Ջանազան-զարմանազան

Ցիցիանովի գլխավորությամբ առաջին անգամ արշավեցին Երևանի վրա, պաշարեցին Երևանի բերդը, բայց գրավել չկարողացան:

1827 թ. հոկտեմբերի 1-ին Երևանը եւ նրա բերդը գրավում են ռուսական զորքերը:

1827 թ. դեկտեմբերի 2-ին առաջին անգամ Երևանի բերդի տարածքում սարդարի պալատի հայելազարդ դահլիճում, բեմադրվեց Ա. Ս. Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս» կատակերգությունը հեղինակի մասնակցությամբ: Դա, ըստ էության, Երևանում առաջին թատերական ներկայացումն էր:

1830 թ. Երևանում բերդի տարածքում, գեներալ Պասկևիչի հրամանով բացվեց առաջին դեղատունը: Ձինվորական այդ դեղատունը համաճարակների ժամանակ սպասարկում էր նաև քաղաքացիներին:

1832 թ. հունվարի 14-ին Երևանում բացվեց առաջին պետական արական գավառական դպրոցը, որը 1868 թ. դարձավ պրոգիմնագիա, իսկ 1881 թ.՝ գիմնազիա: 1920 թ. նրա հիման վրա ստեղծվեց երկրորդ աստիճանի համար երկրորդ դպրոցը, որը 1925 թվականից կրում է Խ. Աբովյանի անունը:

1837 թ. օգոստոսի 7-ին ռուսների կողմից կազմվեց Երևան քաղաքի ու բերդի առաջին ճշգրիտ հատակագիծը:

1837 թ. սեպտեմբերի 2-ին Երևանում Սինդոդի հրամանով բացվեց Հայոց հոգևոր թեմական դպրոցը:

1850 թ. հունվարի 2-ին Երևանում Տիկմանց բարեգործական ընկերության ջանքերով բացվեց

Երեւանի Կապալյանի վարժարան

**Ուսուցչի
ամբողջ
հարստությունը
աշակերտների
մեջ է,
Նրա
ցանած
սերմերի
աճի
մեջ է:**



Մարգարիտա Կապալյանը եւ Լիլիթ Խանամիրյանը



Մարգարիտա Կապալյանը

Արդեն տասնմեկ տարի բարությունը սերմ է տալիս Երևանի Կապալյան մասնավոր վարժարանում:

Արդեն տասնմեկ տարի վարժարանի կամարների ներքո մանկավարժները՝ որպես բարության սերմնացաններ, տասնյակ երեխաների զինում են լույսով, գիտելիքներով ու ճանապարհում մեծ, իսկական կյանք: Այսպես տող-տող, էջ-էջ հյուսվում է ուսումնական հաստատության պատմությունը:

Պարզ, անհավակնոտ պատմություն, առանց որի դպրոցի վաղվա օրը անհնար

ունկնդիրը:

Ամեն առավոտ դպրոցի բակում մի լուսավոր ժպիտ դիմավորում է աշակերտներին: Դիմավորում ու բոլորի սրտերը լցնում նոր սիրով, նոր նվիրվածությամբ: Ջարմանալի է այդ փխրուն, բայցև մեծ հոգում ինքքան սեր և քնքշանք կա ամփոփված:

Տարիների ծալքերում դարս-դարս կուտակված է այն մեծ վաստակը, որով քանիքանի սերունդ է ճանապարհել տարբեր կրթօջախներից: Իսկ այսօր ապրում է իր իսկ հիմնադրած Կապալյան վարժարանի հասունացող պտուղների բույրով արեցած:

դրված նպատակին: Մարգարիտա Կապալյանը հասավ իր նպատակին, և այսօր կրթօջախը ամուր, կայուն հիմքերի վրա է:

Գործադիր տնօրեն **Լիլիթ Վարդգեսի Խանամիրյանը**, մանկավարժներ **Նազելի Լազարյանը**, **Ջառա Զարույնյանը**, **Մարինե Բաղդասարյանը** ժամանակակից մտածողությամբ, նոր շնչով ու փայլով զարդարում են դպրոցը, ուր ուղք դնելիս ամեն ոք, ամեն աշակերտ հպարտություն ու հրժվանք է ապրում:

Այսօր պետք է փաստել, որ ուսուցիչն է աշխատում աննպատակապահանջախնդրի վրա, ապագան կառուցողին նա է ձևավորում:

Սուրբ Մեսրոպ Մաշտոցի կտակին հավատարիմ ուսուցիչ է դասարաններից մեկի դասուցիչը, որին մանուկների շուրթերն ընկեր Լազարյան են անվանում: Իրոք, նա ընկերն է իր աշակերտների, սիրեցյալ անձնավորությունը նրանց ծնողների, տատիկների ու պապիկների, որոնք իրենց ունեցած ամենամեծ արժեք գանձի արժեքները, կրթությունն ու դաստիարակությունը վստահել են նրան՝ Նազելի Լազարյանին:

Նազելի Լազարյանը բանիմաց մանկավարժ է, իմաստացած ուսուցիչ: Տիրապետում է մանկավարժահոգեբանական բազում հմտքների, ընկալում ու յուրացնում է բարեփոխումներ ապրող կրթական համակարգում ծնվող նորությունները, համարձակ կիրառում դրանք և, որ կարևորն է, հասնում դրական արդյունքների:

Կապալյան վարժարանի մանկավարժները մանուկ հոգի մտնելու ճանապարհը իրենց մանկության արահետով են անցնում: Ահա թե ինչու վարժարանին հաջողվում է չնմանվել, չկրկնվել:

Նրանք ունեն մանկան հոգին բացելու իրենց բանալիները, որ գալիս են մանկությունից ու զննում դեպի մանկություն:



Դասուցի Նազելի Լազարյանը իր աշակերտների հետ



Նազելի Լազարյանը

կղաճար և իմաստագուրիկ:

Ով է կանգնած այդ պատմության ակունքում, ովքե՞ր են կերտում այսօր այս վարժարանի պատմությունը, նրա ապագան:

Մարգարիտա Կապալյան: Մարդ, որ ծնվել է մանկավարժի հոգեբանությամբ ու կես դարից ավելի ապրում ու շնչում է այդ հոգեբանությամբ, կես դարից ավելի թերթում է կյանքի էջեր, զգում ամեն մեկի հոգու տվյալանքը, լսում հետաքրքիր պատմություններ, դառնում այդ պատմությունների գործող անձը, մասնակիցը,

Նրա թիկունքում վաստակի տարիները հաճելիորեն ծանրացել են հարուստ բեռով: Գիտի յուրաքանչյուր աշակերտի ընտանիքի պատմությունը, հետաքրքիր խոսք ու զրույց է վարում թե մեծերի, թե փոքրերի հետ: Սկսած գործը երբեք անավարտ չի թողնում, գիտի իր գործի յուրաքանչյուր մանրամասը, խիստ հետևողական է բոլոր հարցերում: Դրանից է, որ դպրոցի ներսում միշտ լույս է ծառագում, տիրում է կարգ ու կանոնը, հարգանքն ու սերը:

Ասում են՝ ցանկացած ճակատամարտում հաղթում է նա, ով հասնում է իր առջև

Ձեռք բերված նկարագիր

**Գրադարանը մարդկային հոգու
բոլոր հարստությունների գանձարանն է:
Լյուբնից**

Լոռու մարզում Ղարաքիլիսա-Կիրովական-Վանաձոր գրադարանային գործունեությունը 95-ամյա տարեգրությամբ, ինքնատիպ ձեռագրով մարզի և Վանաձոր քաղաքի անաղմուկ ու ճիթմիկ գործող հաստատություններից մեկն է: 1915 թ-ից հետո հիմնադրված այդ գրապահոցները տարածաշրջանում առանձնացել են իրենց ձիրքով ու նշանակությամբ: Եվ կամա թե ականա անհրաժեշտություն է գնահատել գրադարանների անցած ճանապարհը:

Դեռ 1915 թ-ին փայլուն ուղղամտությամբ և ուժեղ տրամադրությամբ առանձնացող Ղարաքիլիսեցի սակավաթիվ ինտելիգենտներից մեկի՝ Վերգինե Մխիթարյանի կողմից կազմակերպված ժողովրդական գրադարանի բազայի վրա 1927 թ-ին ստեղծվեց քաղաքային գրադարան, որն իր 5-6 հազար կտոր գրականությամբ և մի քանի հարյուր բաժանորդ-ընթերցողներով հանդիսացավ տարածաշրջանի գրադարանաշինության հիմքը: 1940 թ-ին ունեցավ իր նորակառույց շենքը, որն արդեն հարստացել էր 2000 կտոր գրականությամբ՝ իր ընթերցողների շարքերը համալրելով 2000 բաժանորդով: 1975 թ-ին գրադարանները կենտրոնացվեցին մեկ համակարգի մեջ՝ 6 մանկական և մասսայական մասնաճյուղերով:

Նույն տարում համակարգի կենտրոնական գրադարանը տեղավորվեց նոր շենքում:

1998 թ-ին անջատվեց համակարգից դառնալով հանրապետական, այնուհետև Լոռու մարզային գրադարան, որի տնօ-



աշխատանքը, բավարարվածությունը կատարած աշխատանքից:

Իսկ գնահատականը՝

- Կիրովականի գրադարանը հանդիսանում է փորձառու մարդկանց և ուսումնատենչ երիտասարդների համար ինտելեկտուալ աճի իսկական օջախ...

Վիլյամ Սարոյան

Աշխարհահռչակ հայորդու այսպիսի արժանի գնահատական:

Ցանկացած հաստատություն ունի իր կենսագրությունը: Այդ կենսագրության հիմքը դրել ու կերտել են գործիմաց մաս-

տնօրեններ Էդիկ Ղազարյան, Ալբերտ Լոնեցյան...

Այսօրվա նվիրյալներն էլ ավելի են հարստացնում հաստատության պատմությունը նորանոր նվաճումներով ու հաստատում, որ իրավամբ հանրային գրադարանը գաղափարների բաց սեղան է, որի շուրջ հրավիրված է ամեն ոք:

Մեծարանքի են արժանի բաժինների և ենթաբաժինների վարիչներ Սիլվա Բադասարյանը, Մայա Յովհաննեսյանը, Անահիտ Յակոբյանը, Անդրանիկ Յովհաննեսյանը, Սուսաննա Դանիելյանը, Ռուզաննա Խաչատրյանը, Ռուբինա Մխիթարյանը, աշխատակիցներ Նաիրա Խաչատրյանը, Աստղիկ Խուդինյանը, Ջաբելա Աբրահամյանը, Յրանուշ Ջարթեմյանը, Մարինա Մանուչարյանը, Ալլա Ղուկանը:

1987 թ-ից գրադարանների կենտրոնացված համակարգի փոխտնօրեն նշանակվեց Ֆրոսյա Ջանջուղազյանը, ով իր բեղուն աշխատանքային գործունեությունը շարունակում է Լոռու մարզային գրադարանում: Գրադարանավարական գիտելիքներն ու տարիների փորձը Ֆրոսյային դարձրել են անփոխարինելի մասնագետ-խորհրդատու ընթերցասերի համար: Այս բարեհամբույր կինը գրադարանավարի փայլուն օրինակ է: Նրա ու գործընկերների կազմակերպած ամեն մի ցուցահանդես (կազմակերպվում է հարուստ գրքային ցուցահանդեսներ նվիրված հիշարժան տարեթվերին, հրատարակում «նոր գրքեր»



րենց էր երջանակահիշատակ Լաերտ Սկրոյանը:

2003 թ-ից Լոռու մարզային գրադարանի տնօրենն է Անահիտ Քոչարյանը:

Ներկայացվածը միայն տարեթվերի հակիրճ էքսկուրս էր, տարեթվեր, որոնցում խտացված են սիրած գործին նվիրվածությունը, կայանալու համար տքնաջան

նագետ-նվիրյալներ, որոնք իրենց գործով մինչ օրս ներդաշնակված են սիրելի հաստատության տարեգրությանը:

Յողիկ Ղազարյան, 40-ականների մանկական գրադարանի վարիչներ Յովհաննես Միքայելյան, Ամալյա Խաչատրյան, Մաքսիմ Գորկու անվան գրադարանի վարիչ Արտաշես Մխիթարյան, համակարգի

գրականության տեղեկատու ցանկեր...

Գրադարանում գործում է «Ռուսական հյուրասրահ», որը կազմակերպում է ցերեկույթներ, գրական երաժշտական երեկոներ, գրքային հարուստ ցուցահանդեսներ նվիրված ռուս գրողներին, արվես-

192

տի և մշակույթի գործիչներին), թե ցուցապատառ վկայում են գրադարանագիտության և մատենագիտության խորը իմացությունը:

Մենք բոլորս՝ մանկահասակ, դպրոցի շրջանավարտ, թե ուսանող, երազում ենք դառնալ լավ բժիշկ, աշխարհահռչակ ճարտարագետ, երկրի նախագահ...

Ամեն մեկս անցնում ենք մեր ճանապարհը՝ բազմիցս կարիք ունենալով օգտվել գրադարանի և գրադարանավարի խոր-

հուրներից ու ծառայություններից՝ ցավոք հազվադեպ առիթ փնտրելով գնահատելու և արժևորելու այդ համեստ ու բարեհամբյուր մարդկանց ու նրանց անշահախնդիր աշխատանքը:

Հայ գրադարանի գործունեության զարգացման գործում շատ այլ նմանատիպ օջախների նման իրենց ավանդն ունեն մասնաձորյան գրանդաններն ու գրադարանավարները:

Լծված սուրբ գործին, խոնարհ ծառա կարգված՝ այսօր նրանք մեծագույն սիրով ծառայում են իրենց ժողովրդին:

Լեոն ԽԱՀԱՏՐՅԱՆ

Կյանքը կարճապեւ էր, բայց փառքը հավերժական



Մեծ մարդիկ փառքի իրենց պատվանդանը իրենք են կառուցում, իսկ այն քարե հուշարձանի տեսքով գալիք սերնդին են հանձնում վարպետի մնալուն արժեքների երախտավորները:

«Հանուն Գուգարաց աշխարհի» բիկ-ի նախագահ Վահրամ Բադ-դասարյանը հոգու թելադրանքով վանաձորյան մարդասիրական իդեալներին ու զաղափարներին մվիրված հարուստ կոթողների շարքը հարստացրեց ևս մեկով:

Միեր Սկրտչյան փողոցի սկզբնամասում տեղադրվեց մեծ մարպետի արձանը /հեղինակ Արամ Մարգարյան, համահեղինակ Մարգիս Ղարիբյան/:

Բացման արարողությանը իրենց մասնակցությունը ունեցան ՀՀ և մարզի պետական այրեր, հոգևոր թեմի առաջնորդ Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանը, ճանաչված արվեստագետներ, հայրյուրավոր վանաձորցիներ, հյուրեր:

Ինչպես նշեց ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը. «Կարծում եմ Ֆրունզիկ Սկրտչյանի մասը կցանկանան ունենալ բոլոր քաղաքներն ու գյուղերը: Փառք Վանաձորին, որ այստեղ ևս կանգնեցվեց մեծ արտիստի արձանը»:

Այսուհետ ամենատիտուր աչքերով հայը «կիսոսի» ամեն մի վանաձորցու հետ՝ սովորեցնելով նրանց ժպիտով նայել կյանքի դժվարություններին:

Մեծի մեծարումը կարող է գովք կարծվել, բայց չի կարող հասնել



գովաբանության, որովհետև նա դրա կարիքը չունի, նա բարձր է գովքից էլ, գովասանքից էլ:

Պարույր Սևակ

Հազարավոր լռեցիների սրտի խոսքը ներկաներին հղեց մաս Լոռու մարզպետ Արամ Քոչարյանը.

- Մեր սիրելի Ֆրունզիկը շատ էր սիրում Վանաձորը և հաճախակի էր լինում այստեղ. այսօր նա կրկին եկավ ու կմնա մեզ հետ, լռեցիների սրտում:

Լեոն ԽԱՀԱՏՐՅԱՆ

Հետաքրքիր է իմանալ

Հայերը շատ վաղուց ունեին մի այսպիսի սովորույթ. մատաղ անելիս վանքին էին թողնում մատաղացուի մորթին, որից մասնագետ վարպետներն ու գրիչները մշակում և պատրաստում էին մազաղաթ:

«Հայդուռ». 2-րդ դարից այսպես է կոչվել Եգիպտոսի Սաուդ քաղաքի յոթ դարպասներից մեկը: 6-րդ դարից մինչև 20-րդ դարի սկիզբը այդպես է կոչվել մաս Պոլսի աշխարհահռչակ ս. Սոֆիայի տաճարի ավագ դուռը:

Ազաթանգեղոսի գիրքը միջնադարում և ժամանակին թարգմանվել է արաբերեն, պարսկերեն, հունարեն, սլավոներեն, լատիներեն, ղփչաղերեն:

Ըստ հնդիկ ականավոր հնագետ Դիքշիթի դեռևս մ.թ.ա. երկրորդ հազարամյակի կեսերին Հայկական լեռնաշխարհից Հնդկաստան էր ներմուծվում «Հայաս» կոչվող երկաթը:

Ֆահրադ Ափուջանյանը, որպես մարդ ու քաղաքացի, «պատմե՜լի վրա է»՝ առաջին գծում և երբեք չի ընկրկում դժվարությունների առաջ, խրախուսում ու օրինակ է ծառայում շրջապատի մարդկանց:

Պապ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
«Սևան» թերթի գլխավոր խմբագիր

Ֆահրադ Ափուջանյանն իր շրջապատից տարբերվում է գրագիտությամբ, հարուստ գիտելիքներով, արվեստի և գրականության իմացությամբ: Նա նաև մի ներքին հմայք ունի, որով գրավում է շրջապատի մարդկանց ուշադրությունը:
Համլետ ԽԱՉԱՏՐՅԱՆ
«Թալին աշխարհ» թերթի գլխավոր խմբագիր

ՖԱՀՐԱԴ ԱՓՈՒՋԱՆՅԱՆԸ 60 ՏԱՐԵԿԱՆ Է

Երբ խոսք է գնում մի այնպիսի մարդու մասին, ինչպիսին Ֆահրադ Ափուջանյանն է, ըստ իս, կենսագրական տեղեկություններն ավելորդ են թվում: Մարդուն նրա աշխատավայրերը թվարկելով չես բնութագրի: Դեկավարի իրական կերպարը գնահատվում է նրա աշխատակիցների, ինչպես նաև նրա անհատականությունը խորապես ճանաչած մարդկանց, հասարակության լայն խավերի կողմից ընդունած և արտահայտած կարծիքներով ու վերաբերմունքով:

60-ամյա իմ վաղեմի բարեկամի ու գործընկերոջ, բանասերի, ժուռնալիստի, ուսուցչի, քաղաքագետի, արվեստի ու գրականության ամխոն մշակի մեզ տված հսկայական ժառանգությունը ինքնին համարվում է նրա կենսագրության ու անցած տարիների մեծագույն ամփոփագիրը: Տարիներ առաջ նրան հղած ուղերձում Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ Եպիսկոպոս Չուլջյանը գրում է. «Մեծապես գնահատելով Ձեր անմնացորդ ծառայությունը հասարակական կյանքում ցանկանում ենք, որ Աստծո օգնությամբ իրականանան Ձեր ազգամկեր ու աստվածահաճո բոլոր ծրագրերը՝ ի փառս մեր հավատավոր ժողովրդի: Թող Բարձրալի Աստծո Աջը միշտ հովանի լինի Ձեզ և Ձեր ընտանիքի բոլոր անդամներին»:

Եվ այսպես, 60 երկար ու ծիգ տարիների 40-ը նա անմնացորդ նվիրել է ի փառս մեր ժողովրդի: Աշխատելով կուսակցական ու խորհրդային մարմիններում Ֆահրադ

Ափուջանյանը միշտ մնաց հայ ժողովրդի մի հատվածի՝ աղետի ենթարկված Սպիտակի շրջանի բնակչության յուրաքանչյուրի սրտակից բարեկամը՝ մշտապես իր նպաստը բերելով Սպիտակ քաղաքի ու գյուղական համայնքների բարգավաճման նվիրական գործին:

Երկրաշարժին հաջորդած սոսկալի պահերին նա չլքեց հայրենի երկիրը: Տասնյակ զոհված և վիրավորված ընկերների, հարազատ բարեկամների ցավը սրտում անձնվիրաբար օգնում էր յուրաքանչյուր աղետյալի: Այդ տարիներին լինելով շրջնորդի գործկոմի նախագահի առաջին տեղակալի պաշտոնում, Ափուջանյանը իր անբասիր աշխատանքով կրկին ապացուցեց, որ ինքն անփոխարինելի է ոչ միայն մտավորականի գործունեության մեջ:

Տղամարդու համար հասուն այս տարիքում նա հասցրեց նվաճել բարձունքներ, ճաշակել պաշտոնի քաղցրությունն ու դաճնությունը, պատասխանատվությամբ վերաբերվել իր աշխատանքին, ինչ մասշտաբի ղեկավար և որտեղ էլ եղել է, միշտ մնացել է ազնիվ, սկզբունքային, առաքինի, բարի ու անկաշառ ընկեր, որի համար էլ արժանացել է համընդհանուր սիրո և հարգանքի:

Խորհրդային տարիներին մեր գրականության մեծերի երկերից կցկտուր տեղեկություններ էինք ստանում սփյուռքի լրագրողների մասին ու անկեղծորեն զարմանում, թե մի անձը ինչպես կարող է մի

ողջ թերթի հրատարակման ու տպագրման գործը կազմակերպել: Ֆահրադ Ափուջանյանն ավելին ապացուցեց: Խորհրդային ժամանակների «Լուսարձակի» 15 հաստիքային աշխատող լրագրողներին ոչ միայն միայնակ փոխարինեց, այլ այդ նույն թերթը իր որակով, հետաքրքրությամբ ու զեղարվեստական արժեքներով այսօր երբեմն գերազանցում է հանրապետական շատ լրագրերի: Լրագրող Ափուջանյանը նաև «Մաշտոց» հանդեսի խմբագիրներից է և բազմիցս հանդես է եկել հետաքրքիր ու բովանդակալի հրապարակումներով: Այս բոլորը աննկատ չի մնացել պատկան կազմակերպությունների կողմից: Հայ լրագրության զարգացման գործում ունեցած մեծ ավանդի համար, 2004-ին, ժուռնալիստների միջազգային կոնֆերանսի կողմից արժանացել է դիպլոմի: 2005-ին դարձել է Հայաստանի ժուռնալիստների միության «Ազդարար» մրցանակի դափնեկիր, 2006-ին ստացել է խաղաղության Նոբելյան մրցանակի դափնեկիր Ֆրիտյոֆ Նանսենի ոսկե մեդալ, իսկ 2009-ին «Սանահին» կառավարման ինստիտուտի պատվավոր պրոֆեսորի կոչում: 1995-ից Հայաստանի ժուռնալիստների միության վարչության անդամ է:

Մտածում եմ, որ Ֆահրադի «բախտը բերել է» այն առումով, որ բնությունը շոյալ է գտնվել նրա նկատմամբ՝ զեղեցկադեմ, առնական, շիտակ, հանդարտաբարո, զարմանալի

210

խոնարհի ու մեղմ: Անկրկնելի հմայք ունի, հետաքրքիր պատմող ու գրուցակից է, և ամեն մի նոր ծանոթ նրան կրկին հանդիպելու, գրուցելու, կիսվելու պահանջ է ունենում: Ունի հռետորի ծիր: Նա շատ շնորհաշատ սեղանապետ է: Ֆահրադը ծնվել է մի ընտանիքում, որի հայրը Արամայիս Ափուջանյանը, շրջանում հարգված ու սիրված դեկավար լինելով, նաև մեծ գրասեր, ես կասե՛ի՝ գրապաշտ էր: Սակայն այդ երբ է «մի ծաղկով գարուն եկել»: Ֆահրադի հետ ծնվել էր մի պարարտ հոգի, սիրտ ու էություն, որտեղ տարիների ընթացքում ծլարծակվեցին բյուրավոր ծառ ու ծաղիկներ, որոնց թարմությամբ ու պտղաբերությամբ շրջապատված են նրա մեծ շրջապատի մարդիկ ու նրան իմացող բարեկամ-ընկերները: Ֆահրադ Ափուջանյանից ծնված չորս որդիներն էլ հոր նման կիրթ մտավորականներ են, որոնց մարդկային բարձր արժանիքներով դաստիարակելու գործում մեծ ավանդ է ներդրել նրա կինը՝ վաստակաշատ մանկավարժ, մորը և հայ կնոջը վայել մեծագույն հատկանիշներով օժտված Արևաշողի դպրոցի նախկին տնօրեն Գյուլվարդ Համբարյանը: Հենց այս փառահեղ տիկնոջից հետո է Ֆահրադը սիրում մնացած կանանց: Նրա 17 հոգուց բաղկացած գերդաստանի անդամները, որդիները՝ միջազգայնագետ-պատմաբան

Սևակը, ՀՀ նախագահի աշխատակազմի աշխատակից Նարեկը, աշխարհագրագետ Կարենը, ֆիզկուլտուրայի ուսուցիչ Հակոբը, հարսները՝ մանկավարժական գիտությունների թեկնածու Աննան, դիսերտանտ Լիլիթը, բուժաշխատող Արմիկը, ուսուցչուհի Թեհմինեն, 7 թոռնիկները՝ Արաքսը, Արամայիսը, Արամագը, Գրիգորը, Վահեն, Հրատը, Արամը այնքան են ընկնում միմյանց նկատմամբ սիրով ու հոգատարությամբ, և այսօր այդ գերդաստանը իր մեջ կրում ու պահպանում է ոչ միայն ազգային, ընտանեկան ավանդույթները, բարքերը, այլև ջատագովն է առողջ ու արժանավոր և հանրության կողմից ընդունելի ու ընկալելի նորություններ: Ֆահրադ Ափուջանյանի գերդաստանի անցյալը օրինակելի է, ներկան բարությամբ ու հումանիզմով լցված, ապագան՝ հրաշալիորեն տեսանելի: Թող այն իրականում էլ լինի այնպես գեղեցիկ, խաղաղությամբ ու բարությամբ լեցուն, ինչպես մեզ՝ իրեն ճանաչողներին լավագույն ցանկություն-մաղթանքն է՝ գերդաստանի հոր՝ Ֆահրադ Ափուջանյանի 60-ամյակի առիթով:

Իր հայրենի բնության ու մարդկանց նկատմամբ սիրով լցված մա իր շրջապատի մարդկանց ճակատագիրը համարում է իրենը՝ ապրելով յուրաքանչյուրի հոգսերով, տխրությամբ ու ուրախությամբ: Ափուջանյանի այս նվիրական հատկանիշների արդյունքում ծնվեց, ո՛չ, հրաբխի պես ժայթքեց

«Արևաշող» հսկայածավալ գիրքը: Եթե իր աշխատանքային գործունեության 40 տարիների ընթացքում նույնիսկ ոչինչ արած չլիներ, ապա այս գիրքն էլ բավական է գնահատելու Ֆահրադ-մտավորականի անսահման նվիրվածությունն իր գործին, իր ժողովրդին, ինչպես նաև նրա տիտանական աշխատասիրությանը: Այս գրքի յուրաքանչյուր էջից պարզապես կաթում է Արևաշողի բառն ու բանը, երգն ու տաղը, գյուղին ու նրա մարդկանց հատուկ հունորը, փիլիսոփայությունն ու աշխարհընկալումը: Անգնահատելի պատմական արժեք ներկայացնելով՝ գիրքը կարող է հանդիսանալ նաև արխիվային հսկայական շտեմարան ու նաև գյուղի հանրագիտարան: «Արևաշողը» համարվում է Արևաշողի ու արևաշողիների փառքի ու հավերժության մատյանը:

Թանկագին եղբայր, հորեյանիդ առթիվ հակասական մտորումներ կունենաս... 2 է՞ որ բացարձակապես չես զգում, որ 60 ես: Եվ հետադարձ հայացք գցելով անցած ուղուդ՝ միամտորեն զարմանում ես, որ այս ամենը տեղի է ունեցել ընդամենը մի կյանքի ընթացքում: Մյուս կողմից էլ հանկարծակիորեն մտածում ու գիտակցում ես, որ հայտնվել ես ցայտնոտում: Քանզի ինչ որ արել ես, սիրելի Ֆահրադ, ոչինչ է թվում այն հսկայական չարածի, դեռ անելիքի համդեպ:

Հակոբ ԱԶԻԶՅԱՆ,

ՀՀ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր

«Նռան հատիկ» փառապոնի առջեւ իր դռներն էր բացել Անանիա Շիրակացու անվան ճեմարանը

«Նռան հատիկ» մանկապատանեկան փառատոնի շրջանակներում Անանիա Շիրակացու անվան ճեմարանում կայացավ ճեմարանի մնջախաղի թատրոնի «Ծովի հեքիաթ» և «Հայելի», ինչպես նաև «Կանաչ մուրակ» միջազգային մրցույթի դափնեկիր ճեմարանի թատերական ստուդիայի «Մոգերի ընծաները» ներկայացումները: Միջո-

րոր նվիրված էր հայ մեծագույն վարպետ Ավետիք Իսահակյանի 135 ամյակին: «Պետք է երջանիկ ավարտ ունենա մեր սկսած ցանկացած գործ», - Օ. Հենրիի «Մոգերի ընծաները» ստեղծագործության բեմադրությունից հետո՝ դիմելով հանդիսականին, ասաց կրթօջախի թատերական ստուդիայի ղեկավար Գ. Խոջոյանը:

Անանիա Շիրակացու ճեմարանը աշխարհի 56 դպրոցների թվում կմասնակցի Մայրոտսֆթի «Նորարար դպրոցներ» միջազգային ծրագրին

Անանիա Շիրակացու անվան ճեմարանը աշխարհի 48 երկրների 56 դպրոցներից մեկն է, որ կմասնակցի Մայրոտսֆթի «Գործընկերներ ուսման ոլորտում» ծրագրի շրջա-



ցառումը կազմակերպվել էր թատերական ստուդիայի ղեկավար, փառատոնի հիմնադիր անդամ Գեորգի Խոջոյանի և փառատոնի համահիմնադիր Գարիկ Ղազարյանի նախաձեռնությամբ: Որպես փառատոնի հիմնադիր՝ «Նախաբեմ» ասոցիացիայի նախագահ Գեորգի Խոջոյանը ՀՀ մշակույթի նախարարության կողմից պարգևատրվել է ոսկե մեդալով:

«Նռան հատիկը շարունակվում է», - երեխաների այսպիսի գոյությունը սկսվեց տասներորդ հորեյանական միջոցառումը,

Փառատոնի շրջանակներում միջոցառումներ են իրականացվել տարբեր թատերարահներում, ինչպիսիք են, օրինակ՝ «Մետրո» թատրոնը, «Համազգային թատրոնը»: Այս անգամ փառատոնի առջև իր դռներն էր բացել նաև Անանիա Շիրակացու անվան ճեմարանը:

Փառատոնի նպատակն է երեխաներին ծանոթացնել դրամատուրգների լավագույն գործերին, զարգացնել թատերական շարժումը՝ հատկապես մարզերի դպրոցներում:

Նախներում իրականացվող «Նորարար դպրոցներ» միջազգային ծրագրին: Ճեմարանից ստացված հաղորդագրության համաձայն, այս ծրագրին մասնակցելու համար դիմել էին աշխարհի ավելի քան 114 դպրոցներ «և վերջապես բարդ ընտրության և բարձր մրցակցության արդյունքում ճեմարանը դարձավ այն ամենաառաջավոր դպրոցներից մեկը, որոնք կմասնակցեն «Նորարար դպրոցներ» ծրագրին»:

Այդ կապակցությամբ ճեմարանը

Սպիտակի երկրաշարժը միայն բնական աղետ չի եղել

Տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լավրենտի Սեդրակյանը իր հայտնագործած տատանվող համակարգի նոր հատկության միջոցով ապացուցել է, որ երկրաշարժը ոչ թե 9 բալ, այլ դրանից 5-10 անգամ ավելի ուժգնություն է ունեցել:

1988 թվականի դեկտեմբերի 7-ին կյրանա Սպիտակի երկրաշարժի 22-րդ տարին: Բնական աղետ ներկայացված երկրաշարժը տասնյակ հազարավոր անմեղ զոհերի պատճառ եղավ: Ավերված նյութական արժեքները գնահատվեցին շուրջ 16 մլրդ դոլար: Տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր 85-ամյա Լավրենտի Սեդրակյանը «Առավոտի» միջոցով ցանկացավ մեկ այլ երկրաշարժի բնական աղետ լինելու հանգամանքի վրա ուշադրություն դարձնել: Միայն մեր տվյալներով, 25 հազար զոհ տված 1988-ի աղետին նա գենոցիդ անվանում է տալիս, քանի որ գիտականորեն ապացուցել է այդ երկրաշարժը ամենեւին էլ բնական աղետ չէր: Լ. Սեդրակյանը պոլիտեխնիկական ինստիտուտում սովորելիս է և սապիրանտուրայում անվանական թոշակառու է եղել, 25 տարեկանում ստացել տեխնիկական գիտությունների թեկնածուի աստիճան, 35-ում եղել է «Հայսեսյան շին և կառուցվածքների պահպանման ինստիտուտի» (նախկինում «Շինանյութերի և կառուցվածքների ԳՀԻ» - Լ. Ի.) տնօրենը, այժմ էլ նույն ԳՀԻ-ում լաբորատորիայի վարիչ է աշխատում: «Այն ժամանակ աղետի գոտու տարածքի ամբողջ

ազգաբնակչությունը տեղյակ էր, որ երկրաշարժի պայմաններում նախապատրաստվում էին ԽՍՀՄ զինված ուժերի վարժանքներ անցկացնել և արհեստական երկրաշարժ առաջացնել: Այդ բոլորը կատարվում էր ժողովրդի աչքի առաջ: Եվ հանկարծ 5-6 բալ ուժգնության երկրաշարժի փոխարեն տեղի ունեցավ կործանարար երկրաշարժ», - նշում է Լ. Սեդրակյանը: Ինչ վերաբերում է 9 բալ գնահատված երկրաշարժին, գիտականը կարծում է, որ 9 բալը նման ավերիչ հետեանքներ ունենալ չէր կարող: Նույն կարծիքն էր հայտնել նաև ԽՍՀՄ-ի Սպիտակի երկրաշարժի հետեանքներն ուսումնասիրող հեղինակավոր հանձնաժողովը: «Իմպակտաբար, երկրաշարժի ժամանակ ցնցումները գրանցող սարքեր են եղել, իսկ Սպիտակում, Նալբանդում և էլի ուրիշ բնակավայրերում երկրաշարժի առաջացրած ցնցումները հնարավոր չի եղել չափել», - փաստում է մեր զրուցակիցը: Նրա խոսքով Գյումրիում եղած 9 հարկանի 111 սերիայի բնակելի 138 շենքերը գետնին են հավասարվել: Լ. Սեդրակյանը գտնում է, որ թե շենքերը որակյալ կառուցված լինեին, 9 բալ ուժգնությանը երկրաշարժին պետք է դիմանային: Հարցին, թե ինչպես է որակյալ լինելու հանգամանքն ապացուցում, նա պատասխանում է. «Ցույց եմ տվել, որ այդ շենքերի որակը ցածր չի եղել հաշվի առնելով, թե որ գործարաններն են կառուցել և որ կազմակերպությունները մոնտաժել»: Բացի այդ, նա նաև նշեց, որ այդ նույն շենքերից նաև Վանաձորում են եղել 130-ը, որ չեն փաստվել, այն դեպքում, երբ մեր զրուցակցի խոսքով, Վանաձորում երկրաշարժի ուժգնությունը եւս գնահատվել էր 9-10 բալ: «Սա նշանակում է, որ ԽՍՀՄ քաղաքային և մյուսների համատեղ հանձնաժողովի վճիռը, որ երկրաշարժի ուժգնությունը եղել է 9 բալ, հայած յուրի տեղ չափի ընդունել:

Լ. Սեդրակյանին երկար պրպտումների արդյունքում հաջողվել է հայտնաբերել տա-

տանվող համակարգի նոր հատկություն, ինչը հաճախ չի լինում: Հայտնագործած համակարգի նոր հատկության կիրառումով ստացված երկրաշարժերի ազդեցության օրինաչափություններից է Գյումրիում գործիքային չափումների արդյունքներից ելնելով նա հաշվարկել է, որ Գյումրիում շենքերը տապալվել են հեղինակավոր հանձնաժողովի գնահատած 9 բալից 5-10 անգամ ավելի ուժեղ ցնցումների արդյունքում: «Նոր հատկությունը հնարավորություն է տվել չափազանց պարզ հավասարումներով ներկայացնելու տատանվող համակարգի օրինաչափությունները նաև երկրաշարժերի ազդեցության ժամանակ: Այդ 5-10 անգամ ավելի ուժեղ ցնցումները կարող են լինել արհեստական 6,7 բալ ուժգնության ռազմական վարժանքները անցկացնելու համար նախապատրաստած ցնցումների ժամանակ թույլ տված կոպիտ սխալների արդյունքում»: Լ. Սեդրակյանը պատահական չի համարում նաև վարժանքի աշխատանքները նախապատրաստող հրամանատարական ամբողջ կազմի ռազմական ինքնաթիռով Բաքու ճանապարհելիս ինքնաթիռի կործանումը, որի ժամանակ նրանցից ոչ մեկը կենդանի չմաց. «Չի բացառվում, որ դա հատուկ առաջադրանքով կատարված կործանում էր, որպեսզի կոծկեին ահավոր կործանումները առաջացրած և ժողովրդի դեմ հանցանք կատարած պետությունների պատասխանատվությունը, եթե ոչ այդ երկրների ղեկավարները պետք է կանգնեին դատարանի առաջ»:

Գիտնականը կարծում է, որ զինվարժանքներն անցկացնում էին ԽՍՀՄ-ը և ԱՄՆ համատեղ, հետևաբար սխալ երկուսի մեղքով էր: Լ. Սեդրակյանը կարծում է, որ այս բնագավառի խոշոր գիտնականները կամ պետք է ցույց տան, որ ինքն իր հայտնագործության մեջ թույլ տված սխալներ ունի, կամ էլ ընդունեն, որ ժողովրդի նկատմամբ 1988-ին հանցանք է կատարվել:

Լուսինե ԽԱՉԱՏՐՅԱՆ

220 Անահիտ Շիրակացու ճեմարանը

«Մայքրոսոֆթ» կազմակերպության հայաստանյան գրասենյակից ստացել է շնորհավորական ուղերձ, որում, մասնավորապես, ասված է. «Եվս մեկ անգամ հպարտությամբ շնորհավորում ենք Անահիտ Շիրակացի ճեմարանին միջազգային հաջողության համար և ծրագրի ողջ ընթացքում պատրաստակամ ենք աջակցել ցանկացած հարցում՝ Հայաստանը միջազգային հանրությանը ներկայացնելու, ծրագիրը հաջողությամբ ճեմարանում իրականացնելու, Ձեր փորձը այլ դպրոցներին ներկայացնելու և միջազգային հանրությանը տարաբնույթ ծրագրերով ներկայանալու»:

Ինչպես տեղեկացնում են ճեմարանից, Ծրագրում ընդգրկված դպրոցներն ընտրվում են իրենց ամբողջ ներուժով ստեղծելու ձկուն, փոխանցելի և վստահելի մոդելներ, որոնք կարող են ազդեցություն ունենալ և փոխանցել իրենց փորձն ու ստեղծված մոդելները այլ դպրոցների՝ թե՛ իրենց երկրներում, թե՛ տարածաշրջանում և թե՛ ամբողջ աշխարհում:

«Անահիտ Շիրակացու անվան ճեմարանի ողջ անձնակազմը հպարտությամբ և մեծ ոգևորությամբ ընդունեց այս շնորհավորանքը՝ ձգտելով նորանոր նվաճումների, որոնք հնարավոր են մեծ աշխատասիրության, համախմբվածության և ուսումնական բարձր որակի ապահովման շնորհիվ», - ասված է ճեմարանից ստացված հաղորդագրության մեջ:

170 Զանազան-գարնանազան

առաջին իզական վարժարանը:

1850 թ. հունիսին առաջին անգամ Երևան ժամանեց Կ. Պոլսի Արամյան ընկերության հայ թատրոն-կրկեսը՝ Յովհաննես Գասպարյանի ղեկավարությամբ: Երևանում խաղացին առաջին հայերեն ներկայացումները:

1856 թ. դեկտեմբերի 23-ին Կովկասի փոխարքա Ա. Խ. Բարյատինսկու կողմից հաստատվեց Երևանի վերափոխման առաջին հատակագիծը:

1863 թ. կառուցվեց Երևանի առաջին փողոցը՝ ըստ 1856 թ. հատակագծի, և նախագապետ Աստաֆի անունով կոչվեց Աստաֆևկայա (այժմ Աբովյան փողոց):

1864 թ. հունվարի 21-ին Հախագործման հանձնվեց Երևանի առաջին հեռագրագիծը, որը ձեռքով էր թիֆլիսից մինչև Երևան և անցնում էր Դիլիջանով:

1865 թ. Երևանում մի խումբ երիտասարդների նախաձեռնությամբ և փոխանորդ Ստեփանոս արքեպիսկոպոսի օգնությամբ բացվեց առաջին ընթերցարան-գրադարանը:

1865 թ. աշնանը առաջին անգամ Երևան ժամանեց Թիֆլիսի հայկական թատրոնը Գ. Չմշկյանի

ղեկավարությամբ:

1866 թ. Երևանի հայոց հոգևոր թեմական դպրոցի ուսուցիչների ջանքերով ստեղծվեց առաջին (գավառական) թատրոնը:

1866 թ. ապրիլի 10-ին Երևանում մասնավոր տան մեջ բացվեց Գայանյան օրիորդաց դպրոցը, որը 1877-ին տեղափոխվեց Պողոս-Պետրոս եկեղեցու զավիթ:

1866 թ. հուլիսի 1-ին առաջին անգամ դիվիզանով (հանրակարգ) մշտական երթևեկություն սկսվեց Երևանից Թիֆլիս, ապա՝ Զուբայիս:

1874 թ. Զաքարիա Գևորգյանը հիմնեց Երևանի առաջին տպարանը, որը գործեց մինչև 20-րդ դարի սկիզբը:

1878 թ. Երևանում բացվեց զարեջրի առաջին գործարանը:

1879 թ. սեպտեմբերին տեղի ունեցան Երևանի քաղաքային վարչության և դումայի առաջին ընտրությունները, ընտրվեց 66 ծայրավոր (պատգամավոր): Յուկտեմբերի 1-ին բացվեց քաղաքային դուման:

1879 թ. Պողոս-Պետրոս եկեղեցու բակում Գայանյան ուսումնարանին կից կառուցվեց Երևանի



1976-ին իտալացի կինոռեժիսոր Միքելանջելո Անտոնիոնին այցելել է Հայաստան, եւ հյուրընկալության ծրագրի շրջանակներում նրան տարել են նաեւ այդ օրերին Երեւանում բացված Վիլեն Գաբազանի անհատական ցուցահանդեսին: Անտոնիոնին շատ է հավանել նկարչի աշխատանքները, ինչի ապացույցը տպավորությունների գրքում թողած նրա գրությունն է. «Վիլենը հոյակապ նկարիչ է: Հավատացեք, սա ատում է Անտոնիոնին, ով գիտի, թե ինչ է գեղանկարչությունը»: Հարցազրույցներից մեկում Վիլենն այսպես է պատմում այդ հանդիպման մասին. «Մենք շփվում էինք թարգմանչի միջոցով, շուրջըրըրը անվտանգության աշխատակիցներն էին, բայց մենք իրար հասկանում էինք կեւ խոսքից»: Նկարիչն իր հերթին նկար է նվիրել Անտոնիոնին, եւ նրանց միջեւ այնպիսի բարեկամություն է հաստատվել, որ Հայաստանից մեկնելուց հետո էլ Անտոնիոնին նամակներ է գրել Գաբազանին:

Վիլեն Գաբազանը Մինասի աշակերտն է եւ Վարուժան Վարդանյանի սերնդակիցը: Նրա ստեղծագործական կյանքի զգալի հատվածը համընկել է բրեժնեյան լճացման տարիների հետ, երբ արվեստագետներից ու գրողներից ավելի մեծ համարվածություն, ինքնագոհաբերում եւ սկզբունքայնություն էր պահանջվում արվեստի ուղիով անշեղորեն քայլելու համար, քան Մինասի սերնդի նկարիչներից: Ձեռնալի տարիներին ստեղծագործած, վաթսուհինների սերնդի նորարարական մոտիվներն ու արտահայտչականությունը հիմնականում արվեստի պետական անկարգակնություն: Պետությունը ոչ միայն կազմակերպում էր նրանց ցուցահանդեսներն ու կատարումներ տպագրում, այլեւ պրոպագանդում էր նրանց արվեստը եւ այն հայտնի դարձնում «լայն գանգվածներին»: Հաջորդած սերնդի համար ավելի բարդ էր նկարիչի մասը, քանի որ հետդարձի ճանապարհն այլեւս չկար: Նրանք բաժին հասավ իսկական «դիմադրությունը», եւ նրանք ստիպված էին ստեղծագործել լուսանցքում:

Այդ է պատճառը, որ այսօր նրանցից շատերի

Անտոնիոնի սիրած հայ նկարիչը

անունները ոչինչ չեն ատում շարքային հայ մարդուն: Իհարկե, եղան եւ նկարիչներ, ովքեր գնացին փոխգիծման ուղիով: Վիլեն Գաբազանը լուսանցքն ընտրեց ոչ միայն ստեղծագործության առումով, այլեւ բնակության վայրի: Թերեւե՛ց անվան գեղարվեստի ուսումնառման ավարտելուց հետո նա շատերի պես չմեկնեց միութենական մայրաքաղաք Մոսկվա, որտեղ բացվում էին կարիերայի համար լավ հեռանկարներ: Եվ չնայած անգամ Երեւանում, որտեղ տեղի էր ունենում դրամի, պաշտոնների ու փառքի դափնիների բաշխում:

Նա վերադարձավ իր ծննդավայր՝ Վանաձոր, եւ զավառական, արդյունաբերական այդ քաղաքում ստեղծեց արվեստի այնպիսի միջավայր, որը մինչ օրս էլ արվեստի ծիլեր է տալիս Երեւանին: Թե ինչպես է Երեւանը չորացնում այդ ծիլերը՝ այլ խոսակցության թեմա է, իսկ մենք կշարունակենք խոսել Վիլեն Գաբազանից արվեստագետից, ում ներկայությունն իսկ փոխում էր այդ քաղաքի գործարանային ծխով հագեցած մթնոլորտը: Վիլենի արվեստանոցը արագ դարձավ Վանաձորի ստեղծագործական, մտավորական էլիտայի եւ արվեստասերների հավաքատեղի:

Շուտով Վիլենը ստիպված էր իր արվեստանոցը տեղափոխել եւ քաղաքի կենտրոնում գտնվող նախկին արվեստանոցը վերածել սրճարանի: Եւ տասնհինգ տարի առաջ եղել էր այդ սրճարանում, որ կրում էր «Վիլոյի մոտ» անունը, եւ այստեղ էլ ծանոթացել եւ վանաձորցի այն արվեստագետներին, որոնց հետ արժեր ծանոթանալ: Այդ օրերին սրճարանը Վանաձորի սիրտն էր, որի յուրաքանչյուր անկյունից զգացվում էր արվեստի շունչը: Գաբազանի հետ հանդիպումը ակնթարթային էր, բայց անմոռանալի նկարչի տաղանդի ու հումորի շնորհիվ:

Վանաձորյան իր արվեստանոցում նստած Վիլեն Գաբազանը երագում էր Մշո զաշտ նկարել եւ գիտեր, որ երբեք չի նկարելու: Քաղաքը, որտեղից բռնագաղթել էին իր պապերը, երբեք չէր տեսել եւ չէր էլ տեսնելու, բայց Մուշի կերպարը փոխանցվել էր իրեն գենետիկ հիշողությամբ: Իր իսկ խոսքերով, Լոռվա բնությունը չափազանց շքեղ ու

քաղցրավուն էր իր համար: Նա խուսափում էր օգտագործել կանաչի երանգները, որոնցով ողողված է Լոռվա բնաշխարհը: Կավահողի եւ կիսաանապատային բնության ժուժկա գույներն էին գերիշխում նրա գեղանկարներում, որոնցում վերստեղծում էր իր պապերի կորցրած երկիրը՝ միահյուսելով ժամանակակիցների կենցաղն ու ժողովրդական բանահյուսությունը:

Արդեն ութ տարի է, ինչ Գաբազանը չկա: Մահից հետո նրա ընտանիքը տեղափոխվեց Երեւան, իսկ նկարչի աշխատանքները փակված են վանաձորյան բնակարանում: Լոռվա մարզպետարանն ու Վանաձորի քաղաքապետարանը հորդորել էին հարազատների չգբաղվել նկարչի մահաբանի ծախսերով՝ հայտարարելով, թե «Վիլոն բոլորին է»: Նախատեսված էր քաղաքապետարանի միջոցներով նաեւ հուշատախտակ տեղադրել այն շենքի պատին, որտեղ բնակվել ու ստեղծագործել էր նկարիչը: Սակայն հուշատախտակը չտեղադրվեց, եւ մահաբանի ծախսերն էլ ստիպված եղավ հոգալ ընտանիքը:

Բայց ինչ է արել պետությունը Վիլեն Գաբազանի համար նրա կենդանության օրոք, որ ինչ անել մահից հետո: Չարմանալի է, բայց փաստ. հիսնամյակի կապակցությամբ տպագրվել է նկարչի գրաֆիկական աշխատանքների մի բրոշյուր-կատալոգ սեւ-սպիտակ տպագրությամբ: Ընդամենը: Սա այն դեպքում, երբ նկարիչը գուրկ չէր գնահատանքից ու ուշադրությունից: Հակառակը պնդելու հիմք չկա, եւ հազիվ թե Անտոնիոնի նման ականավոր հյուրին տանեին միջակ նկարչի ցուցահանդեսի: Սա էլ Հայաստանի «արվեստանոց», իշխանավոր գործելու ժամն է, որ անփոփոխ է գնահատել, երբ գնահատականը կարող է իրենց գնահատել, եւ մատնել մոռացության, երբ գնահատվելու խնդիր այլեւս չկա: Եվ սա է Հայաստանում ապրած ու ապրող այն արվեստագետների ճակատագիրը, ովքեր գուրկ են ճարակությունից, չեն զբաղվում ինքնագովազդով եւ, Ստանիսլավսկու խոսքերով ասած, ոչ թե իրենց են սիրում արվեստի մեջ, այլ արվեստը իրենց մեջ: Այսինքն իսկական արվեստագետների:

230 Զանգան-գարմանգան

առաջին թատրոնի շենքը՝ բեմահարթակով:

1880 թ. մարտի 5-ին լույս տեսավ «Պասակ» շաբաթթերթի առաջին համարը՝ Վասակ Պասա-ջանյանի խմբագրությամբ:

1881 թ. հուլիսին լույս տեսավ Երևանի առաջին ամսագիրը՝ «Առողջապահական թերթիկը», որի խմբագիրն էր բժիշկ Լևոն Տիգրանյանը:

1883 թ. փետրվարի 1-ին լույս տեսավ «Երևան-յան հայտարարություններ» թերթի առաջին համարը (խմբագիր-հրատարակիչ՝ Էմին Տեր-Գրիգորյանը):

1890 թ. Լ. Թաիրովի գործարանը թողարկեց Երևանյան առաջին կոնյակը:

1891 թ. նախկին զավառական արական դպրոցի շենքում բացվեց Երևանի առաջին քաղաքային ակումբը, որը առավել հայտնի է Ջամիլիադյանի թատրոն անվամբ (հետագայում՝ Սպայի տուն):

1892 թ. Երևանում գործարկվեց հանքային ջրերի և օշարակի առաջին գործարանը, որը պատկանում էր Խաչիկ Գիվանյանին:

1893 թ. փետրվարի 4-ին Երևանում բացվեց առաջին քաղաքային հիվանդանոցը:

1901 թ. դեկտեմբերի 16-ին սկսեց գործել Թիֆ-



լիս-Վլեքսանդրապոլ-Երևան երկաթուղին:

1902 թ. դեկտեմբերի 5-ին բացվեց Վլեքսանդրապոլ-Երևան երթուղու նոր գիծը: Երևանի և Վլեքսանդրապոլի միջև սկսվեց կանոնավոր ամենօրյա երթևեկություն:

1906 թ. սեպտեմբերին Երևանում առաջին անգամ ելույթ ունեցավ Կոմիտասի երգչախումբը:

1906 թ. սեպտեմբեր-դեկտեմբերին շահագործման հանձնվեց Երևանի քաղաքային ձիաքարշը (կոնկա): Մի երթուղին ձգվում էր Աստաֆյան փողոցով, մյուսը տանում էր դեպի կայարան:

1907 թ. մայիսին գործարկվեց Երևանի առաջին

հիդրոէլեկտրակայանը, որը պատկանում էր «Շուստով և որդիներ» ընկերությանը:

1909 թ. սեպտեմբերի 25-ին Երևանում բացվեց առաջին մանկապարտեզը՝ Վարդուհի Դովիանինյանի նախաձեռնությամբ: Այն գտնվում էր Բեհրուսյան (ներկայիս Արամի) փողոցում:

1911 թ. դեկտեմբերի 23-ին գործարկվեց Երևանի ջրմուղը, որը Երևան հասցրեց 20 կմ հեռավորության վրա գտնվող Քառասունակնի ջուրը:

20-րդ դարասկզբին Երևանի առաջին կինոթատրոններն էին «Ապոլլոն»-ը, որը պատկանում էր Գևորգյանին և գտնվում էր քաղաքային այգում, և «Գրանդ իլյուզիոն»-ը, որը գտնվում էր Ջանփուլադյանի թատրոնի շենքում:

1913 թ. փետրվարի 9-ին Ջանփուլադյանի թատրոնում կայացավ «Ամուշ» օպերայի առաջին բեմադրությունը, ղեկավարեց հեղինակը՝ Արմեն Տիգրանյանը:

1913 թ. ապրիլին Երևան մուտք գործեց առաջին ավտոմեքենան, որը պատկանում էր Շուստովի ազգակից Ֆիլատովին:

1913 թ. մայիսի 12-ին սկսեց գործել Երևանի

Ձայներ՝ հիշողության հուշարձաններից

Ով ունի անցյալ, նա չի կարող ետ չնայել, ով ունի պատմություն, նա չի կարող հիշողություն չունել: Հայ ժողովուրդը ունի հերոսական անցյալ և հարուստ պատմություն, և մենք էլ պարտավոր ենք միշտ ետ նայել և խորապես իմանալ նրա պատմությունը: Մի բան պարզ է, որ այդ պատմությունը ողբերգական է, բայց այն միաժամանակ նաև հերոսական պատմություն է, քանի որ մեր ժողովուրդը ամենադաժան անցյալում, բարբարոս ժամանակներում, գերազանց ուժերի դեմ անդուլ մաքառման պայմաններում չի ընկճվել, չի ոչնչացել, ապրել է հարուստ ստեղծագործ կյանքով, և թեկուզ հոշոտված, արնաքամ, բայց կարողացել է դուրս պրծնել պատմության արյունոտ ժանիքներից ու հասնել մինչև 20-րդ դարը, որը աշխարհի ժողովուրդների համար համարվում է գիտության և տեխնիկայի զարգացման աննախադեպ դարաշրջան: Բայց այն համարվում է նաև ողբերգական դարաշրջան. երկու համաշխարհային պատերազմ, բազմաթիվ երկրներում ազգային-ազատագրական շարժումներ, միլիոնավոր զոհեր, ավերվածություններ:

Այդ դարաշրջանը ավելի սարսափելի ու ողբերգական էր հատկապես հայ ժողովրդի համար: Դարասկզբին տեղի ունեցավ Հայոց Մեծ Ցեղասպանությունը, իսկ դարավերջին թուրքերը մի այդպիսի ցեղասպանություն էլ ցանկացան իրականացնել նաև Արցախում: Բայց մեր ժողովրդի ծոցից ելած քաջարի զավակները թուրքերի վրա թափեցին իրենց նախնիների հոգիներում կուտակված դարավոր վրեժը, և նրանք իրենց արյունոտ դուռնը լցրեցին փախստ անհավետ, էլ ոչ մի վերադարձ չկա նրանց համար:

Փառք այն ժողովրդին, որ այդպիսի մայրեր ունեն, որ կարող են ծնել, սնել ու դաստիարակել հերոսացման ընդունակ այդպիսի զավակների: Այդպիսի մայրերի վրա հնչում է հարատևման հզոր զանգը:

Ահա նստած եմ Արինա մայրիկի առաջ (Հաղորթի շրջան, գյուղ Ուխտաձոր): Տղան՝ Համլետը, սակրավոր էր, գոհվել է 1992 թվականի դեկտեմբերի 13-ին: Մայրը արցունքներ թափելով նորից է պատմում Համլետի մասին.

- Ես նրան ասացի, որ այդ օրը չգնա, չլսեց ինձ, գնաց... Բա մերդ մի հրամանատարի չափ էլ չկար: Բալա ջան, ես հետո միայն հասկացա, որ հայրենի հողը ավելի թանկ է, քան ծնող մայրը:

Ուխտաձորցիները, իրոք, հերոսաբար են կռվել: Արցախյան պատերազմի ժամանակ Ուխտաձորը ամենաթեժ կետն էր, որ ընդամենը 7 կիլոմետր էր հեռու ադրբեջանական Ֆիզուլի քաղաքից: Ասում են, որ ամեն օր ռադիոյով և հեռուստատեսությամբ հաղորդում էին, որ «Ազերները կրկին ռմբակոծեցին Ուխտաձոր գյուղը՝ պատճառելով զոհեր ու ավերվածություններ»:

Գյուղի առաջին զոհերը եղան՝ Վրեժ Աբալյանը, Ալյոշա Ջալյանը, Ալիկ Բադալյանը, Գառնիկ Բաբայանը: Ազատամարտիկները լոկ գյուղի պաշտպանության համար չէին մտածում,

տեսնում էին, որ հարևան գյուղը վտանգի մեջ է, իսկույն հասնում էին: Ջոթեղը Ուխտաձորն էր, որին թշնամին անընդհատ նշանառության տակ էր պահում, հզորին ուզում էր ծնկի բերել՝ կարծելով, որ Թագածը հեշտ կլինի:

Ուխտաձորցիների համախմբվածությունը ավելի էին զագագեցրել թուրքերին, որոնք փորձում էին հաշվեհարդար տեսնել բնակչության հետ, ուժի և սարսափի միջոցով լռեցնել ոտքի ելած, դանակը ոսկորին հասած ժողովրդին:

Բայց, իզուր, ոչ մի ուժ չկարողացավ կոտրել բռնացված ժողովրդի կամքը:

Գյուղ մտնող ճամփեզրի էլեկտրական այլուի վրա ծածանվեց Հայաստանի եռագույն դրոշմը:

Գյուղի ազատամարտիկների ընդհանուր ղեկավարը՝ կամավորական Մանվել Գրիգորյանն էր: Նա շարժման հենց սկզբից էլ զինվորագրվել էր ազնիվ պայքարին:

- Կամավորականը նա է, ով տանը չի կարող նստել, երբ սրբազան կռիվ է, վտանգ է կախվել տանդ վրա: Մեր տունը Հայաստանն է, որ սկիզբ է առնում Արցախից, - ասում էր Մանվելը:

Մանվելին լսում, ենթարկվում էին ոչ միայն ուխտաձորցիները, այլև շրջակա գյուղերի հայ ազգաբնակչությունը: Արդեն գիտեին, որ Ուղտաձորի ենթաշրջանը ապահով ձեռքերում է:

Հաղորթի շրջանից գոհվեցին 314 քաջորդիներ, որոնցից քսանմեկը Ուղտաձորից: Մեկը մյուսից թանկ ու քաղցր, մեկը մյուսից ջահել ու խիզախ: Եվ կրկին անգամ համոզվում ենք, որ գոհվածները սերունդն են կյանքի ու ինտելիության:

Արբերի տան փոքրիկ էր ու տան սերունդը: 1993-ի մայիսի 28-ին գյուղի ազատամարտիկները իրենց ուսերին տուն բերեցին 18-ամյա Ալբերտ Հաղորթյանյանին, ինչպես արդեն մարտական ընկերներն ու ժողովուրդն են կոչում՝ իգիթին:

Ջարմանալի է... 18-ամյա մարտիկ և ժողովրդի շուրթերին երգ դառած անուն, այն էլ՝ իգիթ-հերոս: Ուրեմն մարդու կյանքի իմաստը երկար ապրելու մեջ չէ, այլ կատարած սխրանքի, այն էլ այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ թշնամին սպառնում է օջախիդ, հողիդ, սերնդիդ, գալիքիդ:

Գյուղի մարդիկ միառանձին հիացմունքով են խոսում գյուղի «գնդի» որդու՝ Մավրիկի մասին: Քանի՞-քանի՞ անգամ է նա հայտնվել դիրքերում: Պատերազմը փոքրիկին դարձրել էր խելամուտ ու գործնական: Ազատամարտիկները հիացած էին տղայի խիզախությամբ:

- Մավրիկը հոգու տեր տղա է, - ասում էին, - հույսի կանչ...

Այդպիսին է Բաղրամյանների տոհմը. պապը՝ Ասկյարը, մասնակցել է երկրորդ աշխարհամարտին և Կերչի ահեղ ճակատամարտում ծանր վիրավորվել, հաշմանդամ դարձել: Պապի արյան կանչն է, որ մղել է երեք տղաներին, թողնալով պաշտպանելու հայրենի հողը:

Մավրիկը գոհվել արկի պայթյունից: Նա ընդամենը 15 տարեկան էր, բայց արդեն վաստակել էր ողջ գյուղի սերն ու

համակրանքը, նրա անունը բոցեղեն ու անմար կրակ դարձավ:

Հինգ քրոջ միակ եղբայրն էր Աշոտ Օհանյանը: Նրա տարերքը մարգաշ-խարին էր. թեթև ատլետիկայով էր զբաղվում, ծանրամարտով: Հեշտությամբ բարձրացնում էր 120 կիլոգրամանոց ծանրաձողը: Ահա թե ինչու զինծառայությունից հետո որոշեց սովորել Երևանի ֆիզկուլտուրայի ինստիտուտում:

Չէ, անտարբեր լինելն Աշոտի համար չէր ասված. հարազատ ծննդավայրին վտանգ էր սպառնում, և նա չէր կարող բավարարվել միայն Երևանյան միտինգներով ու «միացում» գոռալով: Թողեց կրթօջաղը, եկավ հայրենի Ուղտաձորը փրկելու: Աշոտն ընկավ, որ ապրեն քույրերը, որ նրանց երեխաների շուրթերին միշտ դողանջի Հայոց այբուբենը:

Կցկոտուր մի քանի բառ ասաց մարտում ընկած զինվորի մայրը՝ Ալիդան: Ամեն մի բառի հետ դողում էին շուրթերը. «Ղափանի շինարարական տեխնիկումն է ավարտել Մերգեյ բալաս, չսպասեց էլ, որ դիպլոմ ստանար...»: «Նշանված էր. Զարինեի լուսանկարը գրպանում էր պահում». «Ինքն էլ լուսանկար դարձավ...»:

Երևանի պետական համալսարանի պատմա-բանասիրական ֆակուլտետն էր ավարտել Ուխտաձորցի Ռոմա Մկրտչյանը: Ուսուցչություն էր անում մայրաքաղաքի դպրոցներից մեկում: Դասամատյանը փոխարինեց գենըրով: Մասնակցեց Ուխտաձորի, Մարտակերտի բազում գյուղերի ազատագրմանը: Մական 1993-ի մայիսին, Մեծ շենի մոտակայքում, նռնակներից գոհվեց Ռոմա Մկրտչյանը, պայծառ մի անուն, որ այսօր էլ հնչում է ընկերների, բոլոր ճանաչողների շուրթերին:

Նրա աճյունը տեղափոխեցին հարազատ ծննդավայր՝ Ուխտաձոր: Ասում են, որ մանկության ընկերները՝ այսօրվա քաջարի մարտիկները, կանգնել էին դագաղի մոտ ու եղովել. «Ոչ մի թշնամի չի կարող ոտք դնել մեր սուրբ հողը: Այն իր գրկում միշտ կպահի Ռոմայի սուրբ աճյունը»:

Նորից մտաբերենք Ուխտաձորի 21 նահատակվածներին, որոնցից ամեն մեկը մի Արև-սար (գտնվում է գյուղի վերևում), ամեն մեկը մի պահապան, ելած մարտի՝ ինչպես քաջ Վարդաններ: Կովում էին պապերի արյան կանչով, ինչպես Ավարայրում, Մարդարապատում... Ավարայրի պես անհավասար էին Արցախի բոլոր ճակատամարտերը, բայց տղաները, ինչպես ասում են, իրենք իրենց գերազանցեցին: Սա այն պատերազմն էր, որ առաջին անգամ միաբանեց բոլորին: Եվ այսօր նրանք հուշարձաններ դարձած, բոլորը մեր կողքին են, նրանք մեր ներկա և գալիք բոլոր սերունդների սրտերում կլինեն հավերժ: Մենք լսում ենք նրանց ձայները հիշողության հուշարձաններից:

Արմինե ՍԱՐԳՍՅԱՆ,

Արցախի պետական համալսարանի «լրագրություն»
բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի

Вера Полетаева «Армения, Россия»

Звезда российской эстрады, автор и исполнитель песен **Вера Полетаева** приняла участие в рамках концерте «Армения, Россия! Мы - дети ваши!» 19 сентября 2010 г. в спорткомплексе «Лужники». Певице была оказана честь открыть это грандиозное, даже по мировым меркам, мероприятие. Вместе с прославленным хором им. Пятницкого и ансамблем танца «Цветы Армении» артистка прекрасно исполнила торжественную оду «Армения, Россия», которую специально написала для открытия праздничного концерта. Вера Полетаева представляла Армению и с огромным успехом выступила перед 100-тысячной аудиторией в национальном армянском костюме. Сценический образ артистки символизировал дружбу и единение двух стран - Армении и России. Молодая стройная красавица в длинном бардовом платье, расшитом золотом, с короной на голове и золотой фатой покорила всех своим обаянием, проникновением и красивым чарующим голосом! Ведущий концерта назвал Веру, принцессой.

Песня Веры Полетаевой «Армения, Россия», написанная высокохудожественно и профессионально, вызвала у зрителей восторг и восхищение! Интересен сам сюжет. Страны Армения и Россия представлены в образе двух сестер, которые живут в мире, согласии, и у каждой есть свои достоинства. Во время исполнения зритель окончательно стёр для себя границы этих стран, мастерски и без пафоса Вера Полетаева сумела передать настроение патриотизма и любви Армении и России. В припеве песни торжественно и вдохновенно звучат строки:

**Армения, Россия! Мы - дети ваши!
Ничто не разлучит
Сердечной дружбы нашей!
Армения, Россия! Мы - дети ваши!
И пусть Господь хранит
Родные страны наши!**

В этом большом юбилейном концерте так же выступили: И. Кобзон, А. Серов, И. Саруханов, Дзах Арут, Дживан Гаспарян, Арменчик, Зара, Тимур Темиров и др.

В ноябре этого года телеканал tv.arm.ru г. Москва пригласил звезду российской эстрады Веру Полетаеву выступить «в живую» в телепередаче «Unplugged». Артистка великолепно исполнила свои прекрасные, проникновенные хиты и, конечно, программу открыла «Армения, Россия». Обворожительная красавица Вера Полетаева рассказала о своем творчестве, поведала интересную историю создания песни «Армения, Россия» и сказала: «Я с большой симпатией отношусь к армянскому народу. Это люди умные, трудолюбивые, талантливые, доброжелательные. У нас единая религия и общий дом. И мне бы очень хотелось, чтобы песня «Армения, Россия» была у всех на слуху, и в Армении и в России, потому что эта песня нас объе-



диняет». Посмотреть телепрограмму «Unplugged» с Верой Полетаевой вы можете в Интернете, пройдя по следующей ссылке:
<http://www.tvarm.ru/rubrics/showbiz/unplugged/3461-1.html>

Вера Полетаева – артистка, профессиональная певица, композитор, поэт, преподаватель эстрадного вокала, интеллектуал и просто красавица. Большая редкость, когда в одном человеке присутствует сразу столько талантов! Вера Полетаева получила высшее педагогическое и профессиональное музыкальное образование, прошла стажировку по эстраднему вокалу в Академии им. Гнесиных и Университете Культуры. Артистка имеет большой сценический опыт, ведет активную концертную дея-

тельность. Высочайшее профессиональное мастерство Веры Полетаевой оттачивалось долгими ежедневными репетициями. Пение всегда было ее любимым занятием! У Веры прекрасные вокальные данные. Завораживающий сильный узнаваемый голос певицы имеет большой диапазон и передает множество различных красок, эмоций и чувств. Артистка обладает идеальным вокальным слухом, свои песни она записывает без всякой технической коррекции и прекрасно поет «в живую». Вера Полетаева наделена необыкновенной харизмой, обаянием, магнетизмом. Лучезарность и яркая индивидуальность артистки притягивают множество поклонников ее таланта. У Веры Полетаевой красивые, ду-

шевные, высокохудожественные песни и большинство из них - настоящие хиты. Поклонники говорят и пишут Вере через Интернет слова искренней благодарности, добавляют ее хиты на свои странички в социальных сетях, создают на них видеоролики и с нетерпением ждут ее новых песен. Помимо собственных произведений Вера Полетаева великолепно исполняет огромный репертуар песен советской, российской, зарубежной эстрады, романсы.

Сольные концерты звезды российской эстрады Веры Полетаевой пользуются у зрителей большим успехом! Девиз певицы - «Дарить людям радость и любовь своим творчеством!».

Вера Полетаева родилась в Калуге. Выступать с сольными песнями начала в еще в детском саду. Тяга к творчеству у Веры появилась с ранних лет, она очень любила рисовать и уже в начальной школе писала сказки, стихи, пьесы. Песни начала сочинять с 13 лет, как только в доме появилось фортепиано. В 15 лет Вера Полетаева впервые записала на студии песню, которая называлась «Знак зодиака».

Сейчас у певицы - три сольных альбома: «Радуга» (2006), «Художница» (2008), «Краса России» (2010) и в настоящее время она работает над четвертым.

Все ее произведения есть в Интернете

на сайте www.realmusic.ru. А на сайте www.youtube.ru вы можете посмотреть видеоролики на песни Веры Полетаевой, сделанные народными умельцами и концертные выступления артистки.

Песня «С днем Рождения!» пользуется популярностью в Интернете в качестве поздравительной музыкальной открытки.

Песня «Краса России» посвящена другу Веры, замечательному человеку. В ней показан идеальный образ русской красавицы. Вера Полетаева считает, что девушка должна быть прекрасна и внешне и внутренне.

Каждый должен быть патриотом своей страны. Песня «Моя Россия» как раз об этом.

Все самые теплые пожелания для вас, ваших друзей, близких и родных звучат в песне «Вам желаю». Это произведение - отличный музыкальный подарок к любому празднику.

Вера Полетаева сочинила сотни замечательных хитов. Для ее дальнейшего продвижения на Олимп российской эстрады нужна финансовая поддержка, заинтересованных в ее творчестве людей, готовых помочь. Вера Полетаева будет крайне признательна за любую помощь! С ней можно связаться

по телефону 8-919-036-59-69,
e-mail: poletaeva0309@mail.

Вася ПЯТИБРАТОВ.

Армения, Россия

Две сестры душевные, родные
Меж собой в согласии живут
Их зовут - Армения, Россия
И для нас есть дом и там и тут!

Припев:


Армения, Россия
Мы - дети ваши!
Ничто не разлучит
Сердечной дружбы нашей!
Армения, Россия
Мы - дети ваши!
И пусть Господь хранит
Родные страны наши!

Ты сестра Армения пригожа
И умна, и уважаешь труд,
И ты мать таких людей хороших!
Сколько благ всем нам они дают!

Припев:

А сестра по имени Россия
Весела, душою широка
И добра, полна могучей силы!
Ненаглядна, очень велика!

Припев:



СЛАВА САМВЕЛУ САМВЕЛОВИЧУ!

К 80-летию Григоряна С.С.

Тавтограмма

Сад. Сад. Сады... СТРАНА САДОВ.

Событие - в селе Страны Садов.

- Сын!.. Сын!.. Сын! - сообщает Самвел - создатель сына.

«САМВЕЛ» - согласилась семья.

Сбор соседей: селян, славян, не славян.

Скатерть-самобранка: сыр, сок, сельдь да спирт (не сливовый)

Стукаются стаканами собравшиеся с Создателем сына

Счастлива семья.

Счастливы соседи.

Счастлива Страна садов.

... Сел сын за страницы: строка за строкой, за строкой строка...

- Созрел! - согласился Самвел-Старший.

Собрали сумку со сладостями и -

в Степанакерт - Столицу страны Садов

Сел в самолет и - в Столицу страны Советов.

Сын селянина - студент.

Строка за строкой, за строкой строка. Сам строчит страницы.

- Сочинитель! Суперученый! - судачат сверхспециалисты.

Сегодня сорок да сорок стукнуло Самвелу-Младшему.

Сегодня - слет сверстников, соратников и соотечественников

Съезд сокурсников, сослуживцев, сеньеров, сеньерин.

Символ серебряный от САР-а на сюртуке Самвела.

Спутница - в слезах счастья: супруг - в созвездии славных.

Слава Самвелу - сыну Страны садов, сыну страны славян.

